Ազգ
Azg
4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 152(5004)
ISSN: 1829-1651

# Միայն անկախության պայմաններում Արցախը կարող է իրեն ապահով զգալ

## *Արա Աբրահամյանն առաջարկում է կոնկրետ քայլեր*

***Ադրբեջանցի մարդասպանի արտահանձնման եւ հերոսացման փաստից հետո տեսակետների տարափ է սկսվել, թե ինչպե՞ս պետք է իրենց պահեն Հայաստանի իշխանությունը, Սփյուռքի հայությունը, բոլոր հայերը ողջ աշխարհում: «Ազգի» հարցազրույցը Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանի հետ եւս նույն ծիրում է: Հարցազրույցը կայացել է շաբաթ երեկոյան:***



**- Պարոն Աբրահամյան, որո՞նք են լինելու Ռուսաստանի հայերի միության քայլերը, ի՞նչ եք ձեռնարկում, քանի որ Ռուսաստանում հայերն ամենից մեծ համայնքն են ձեւավորել եւ այս իմաստով աշխատանքի մի զգալի ծավալ Ռուսաստանի հայերը պետք է իրականացնեն, ընդհանրապես՝ ի՞նչ առաջարկներ ունի ՌՀՄ-ն:**

- Արդեն մի քանի օր է՝ Ռուսաստանի հայերի միությունը խորհրդակցություններ է անցկացնում, որին մասնակցել են նաեւ Հայաստանի դեսպան Օլեգ Եսայանը, հոգեւոր առաջնորդ Եզրաս սրբազանը եւ այլք: Այդ խորհրդակցությունների ընթացքում քննարկում էինք մեր հետագա քայլերը: Քանի որ այս դեպքը ոչ միայն հանցագործին բաց թողնելու փաստ է, այլեւ շատ ավելի խոր գնացող, խորամանկ քայլ, որով Ադրբեջանը ցույց է տալիս, որ ով հայ մարդուն սպանի, կդառնա էդ ազգի հերոսը, մեծ հարստության տեր, կստանա բնակարան, սա ադրբեջանցիների համար ողջ աշխարհում մեր դեմ այսպիսի քայլեր անելու օրինակ կարող է լինել, որ քնած տեղը ամեն հային կամ ամեն հայ ուղեւորին սպանեն: Ու ամենակարեւոր խնդիրը սրա չկրկնվելն է: Այս իմաստով ես եւ Ռուսաստանի հայերի միությունը մի շարք քայլեր ենք առաջարկում:

Նախ՝ ես ուզում եմ այս հարցի շուրջը միավորել բոլոր հայկական ուժերին եւ կազմակերպություններին՝ ստեղծելով մի կոորդինացնող կառույց, որը զբաղվելու է այդ խնդրով եւ համակարգելու է ջանքերը: Այդ կառույցում կլինեն նաեւ ավանդական կուսակցությունները: Դրա իմաստն այն է, որ ավելորդ ու ինքնուրույն քայլեր չարվեն, չտրվենք էմոցիայի, եւ ամեն ինչ խիստ կազմակերպված լինի: Եթե տարաձայնություններ կան, այս կառույցում պետք է դրանք վեր հանվեն: Ամեն մեկս հերոս չխաղանք առանձին, մինչեւ մեր նպատակներն իրականացվեն:

*Տես էջ 2*

# Ողորմելիության «շքահանդես»

Որ «ազերպրոպ»-ը Ռամիլ Սաֆարովյան «տոնախմբությունները» ներկայացնելու է իբրեւ «հերթական հաղթանակ», կասկածից դուրս էր: Դա բնական է մի երկրի վարչախմբի համար, որը իրական պարտություններից տասնամյակներ անց էլ ուշքի չի գալու: Հին իմաստնությունը ամենաողբերգական է գնահատում այն մարդուն, որը «չգիտի, որ չգիտի»: Ասված է իլհամալիեւների համար: Ռամիլ Սաֆարին ներում շնորհելու եւ «պանծացնելու» նրա որոշումը միանշանակորեն բնութագրում է ցածրակարգ «վրիժառուի» նրա բուն էությունը:

Ամեն ինչ արված է ոչ թե հանուն «ադրբեջանցի սպայի», այլ՝ ի հեճուկս հայ ժողովրդի: Եվ այդ մարտահրավերը պետք է ընդունել արժանապատվորեն: Խոսքը պետական կառույցների մասին չէ: Դա արվել, արվում եւ արվելու է: Կարեւոր է ձերբազատվել «պարտության» բարդույթից: Մենք ոչինչ չենք կորցրել: Կորցրել է ադրբեջանական ժողովուրդը, որի գլխին իշխող վարչախումբը հերթական անգամ նրան աշխարհին ներկայացնում է «բերանն արնոտ անբան մարդակերի» կերպարով:

Մենք հանգիստ ենք. Երեւանում եւ Ստեփանակերտում «կացնով մարդ» չի շրջում: Մեր երեխաներին չի պարտադրվում խոնարհումի տուրք մատուցել մի վախկոտ «մսագործի»: Մեր հասարակությանը կանիբալիզմ չի քարոզվում: Այս ամենը, ողորմելիության այդ «շքահանդեսը» տեղի է ունենում Բաքվում: Ադրբեջանում է, որ կառավարող վարչախումբը հպատակների լուռ բազմությանը ներշնչում է մարդատյացություն:

«Երկրորդ հանրապետության վախճանը» գրքում Զարդուշտ Ալիզադեն 1990 թ. հունվարյան օրերի Բաքուն համեմատել է 1930-ականների Բեռլինի հետ: Միանգամայն ճիշտ գնահատական, որի արդարացիությունը փաստում է 2012-ի Բաքուն էլ. այդ քաղաքում շրջում է կացնավոր մարդու «ուրվականը»: Այդ «ուրվականն» իր քարանձավային «մշակույթն» է պարտադրում մի ամբողջ ժողովրդի: Ճիշտ այնպես, ինչպես սումգայիթցիների տականքները՝ 90-ականների սկզբին:

Ի՞նչ եղավ դրանից հետո՝ հայտնի է: Սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտի կենտրոնական փողոցներով քայլերթեցին ԼՂՀ պաշտպանության բանակի զինվորական շարասյուները: Դա արժանապատիվ բանակի երթ էր, պատերազմի դաշտում հաղթանակներ կռած ժողովրդի բաց զորահանդես: Նույն օրը Բաքվում «մեծարեցին» ո՞ւմ: Մեկին, որ արատավորել է սպայի պատիվը: Մեկին, որ քաղաքակրթությունից հեռու է այնքան, ինչքան իր քարանձավաբնակ նախնին: Դա ադրբեջանական ժողովրդի ողբերգությունն է:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ալբեր Քամյուն փայլուն հրապարակախոսություն է գրել՝ «Նամակներ գերմանացի բարեկամիս»: Պատմելով ֆրանսիական դիմադրական շարժման մարտիկներին գնդակահարության տանելու միջադեպի մասին, երբ գերմանացի հոգեւորականը բեռնամեքենայի խցիկը ծեծում, կանգնեցնում եւ ֆաշիստներին է մատնում փրկվելու փորձ արած մի պատանու, Քամյուն արդարացիորեն բացականչում է. «Դուք զորակոչել եք անգամ Աստծուն, դուք պարտված եք»:

Այսօր ադրբեջանական ժողովրդին մենք մի ասելիք ունենք. «Քեզ պարտադրում են գլուխ խոնարհել ոչնչության առաջ, երկրպագել նրան, քեզ տանում են դեպի հերթական պարտություն»: Քանի որ ամեն ինչից վեր՝ մարդու, ժողովրդի, ազգի բարոյականությունն է: Նրա նպատակի տեսլականը: Իշխող վարչախումբն իր հպատակներին ստիպում է երկրպագել բռնությունը, մարդատյացությունը, խարդախությունը, գաղտնի գործարքները: Նման «արժեքներ» դավանող հասարակությունը պարտված է: Նրան չեն օգնի ոչ փողը, ոչ ժամանակակից զինատեսակները... Ոչինչ չի օգնի: Քանի որ դա բռնաբարված եւ փողոց նետված- պոռնկացված մարդկանց զանգված է՝ վերից՝ վար, աջից՝ ձախ:

Ողորմելիության այդ «շքահանդես»-ը նողկալիորեն մեջք ծռած՝ ադրբեջանական հասարակությանը միակ արժանի «տոնն» է, ինչի առթիվ պատմության քմահաճույքով մեզ «հարեւան» եկածների բազմությանը հարկ է ասել. «Քո անկման համար մենք մեղավոր չենք»: Եվ շարունակել մեր ճանապարհը, որովհետեւ այն տանում է ՏԱՃԱՐ: Իսկ ԿԱՌԱՓՆԱՐԱՆԸ, որ կառուցում են Բաքվում, դեռ շա՜տ արյուն է տեսնելու: Այսօր ողորմելիության «շքահանդես»-ում պոռնկացողների արյունը...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ԵԱՀԿ Մինսկի համանախագահները մտահոգված են վերջին միջադեպով

**Երեկ Փարիզում հանդիպել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանն ու Էլմար Մամեդյարովը: Քննարկվել են ղարաբաղյան կարգավորման գործընթացն ու տարածաշրջանային զարգացումները: Հանդիպումից հետո համանախագահների տարածած հայտարարությունից երեւում է, որ քննարկվել է նաեւ Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանին արտահանձնելու եւ նրան ներում շնորհելու փաստը. համանախագահները մտահոգություն եւ ափսոսանք են հայտնել հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանողին Ադրբեջանում ներում շնորհելու առթիվ, նշելով, որ դա եւ Սաֆարովին մեծարելու որեւէ փաստ բացասական ազդեցություն կունենան 2 կողմերի միջեւ փոխադարձ վստահություն հաստատելու եւ բանակցային գործընթացի վրա: Համանախագահները նաեւ վերահաստատել են, որ ղարաբաղյան կարգավորման խաղաղ գործընթացն այլընտրանք չունի, ինչպես որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներն են հայտարարել Լոս Կաբոսում, հունիսի 19-ին, եւ վերահաստատել, թե շարունակելու են նպաստել կողմերի միջեւ լարվածության նվազեցմանը, խաղաղ կարգավորման ընթացքին:**

**Հանդիպմանը մասնակցել է ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը:**

Մ. Խ.

# Բակո Սահակյան. «Ազատագրված տարածքները մեր հայրենիքի մի մասն են»

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Ստեփանակերտ

**Սեպտեմբերի 3-ին Ստեփանակերտում ընդունելով Լիբանանից Արցախ ժամանած գործարարների պատվիրակությանը՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հայտարարեց, որ «ազատագրված տարածքները մեր հայրենիքի մի մասն են»: Լիբանանցի ավելի քան ութ տասնյակ գործարարներ միավորվել ու ստեղծել են ԱՐԻ (Artsakh Roots Investment) ընկերությանը եւ վարկավորում են գյուղատնտեսությունը եւ անասնապահությունը աշխարհի ամենառիսկային համարվող շրջաններից մեկում՝ Լեռնային Ղարաբաղի Շահումյանի (Քարվաճառ) եւ Քաշաթաղի (նախկին Լաչինի, Ղուբաթլուի, Ջեբրայիլի, Զանգելանի վարչական միավորներ) հատվածում՝ Մռավից Արաքս ընկած տարածքներում:**

**«Մենք լավ հնարավորություն ունենք Արցախի գյուղատնտեսությունը զարգացնելու Արաքսի ափին, որտեղ տարվա 320 օրերին արեւ կա», ասաց Սահակյանը: Պատասխանելով գործարարներից Ստեփան Տեր-Պետրոսյանի հարցին, թե հնարավո՞ր է, որ ազատագրված տարածքները դառնան սակարկության առարկա ԼՂ բանակցային գործընթացում, նախագահ Սահակյանը ասաց. «Մենք քայլ առ քայլ զարգացնելու ենք այդ տարածքները»: Արցախի առաջնորդը դրվատեց այն աշխատանքը, այդ թվում՝ ԱՐԻ-ի, որ կատարվում է ազատագրված տարածքներում: «Ահա դա է ձեր հարցի ամենաճիշտ պատասխանը», ասաց Սահակյանը:**

**ԼՂՀ նախագահը ԱՐԻ-ի ընկերությանը պարգեւատրեց «Երախտագիտության մեդալով»՝ Արցախի գյուղատնտեսության զարգացմանը նպաստելուն ուղղված ջանքերի համար: «Ձեր աշխատանքը նոր շունչ է տվել Քաշաթաղի եւ Շահումյանի շրջաններին», ասաց Բակո Սահակյանը:**

*Տես էջ 4*

# «Հունգարիան Սաֆարովին Ադրբեջանին է հանձնել Թուրքիայի միջնորդությամբ»

Թեեւ PKK-ի հետ կռիվները, քրդական այս կազմակերպության Շեմդինլին, Չուքուրջան եւ Բեյթուշշեբաբը գրավելու փորձերը եւ կռիվներում թուրքական զինված ուժերին հաճախակի պատճառած զոհերը ստիպել են Թուրքիային ուշադրությունը բեւեռել քրդական հարցի վրա, այնուամենայնիվ, թուրքական կենտրոնական թերթերն արձագանքում են ինչպես Ռամիլ Սաֆարով կոչված հրոսակին Ադրբեջանին հանձնելու Հունգարիայի արարքին, այնպես էլ Բաքվում ադրբեջանական ոհմակի այս մարդասպան զավակի փառաբանմանն ու պարգեւատրմանը:

Թերթերից թերեւս պետք է առանձնացնել «Միլլիեթին»: Ահա թե «Սաֆարովի հանձնմանը Թուրքիան միջնորդեց» վերնագրով ինչ է գրել սեպտեմբերի 2-ի համարում. «Նախորդ օրը, երբ հայ զինծառայողին կացնահարելու համար Հունգարիայում ցմահ բանտարկության դատապարտված Ռամիլ Սաֆարովը հանձնվեց Ադրբեջանին, ու նախագահ Իլհամ Ալիեւը ներում շնորհեց վերջինին, հայաստանյան ճակատում ի հայտ եկան հրապարակումներ, ըստ որոնց՝ Ադրբեջանի եւ Հունգարիայի միջեւ պարտատոմսերի գնման շուրջն իրականացվող սակարկությունները արդյունքի են հասել Թուրքիայի միջնորդությամբ:

Հունգարիայից 3 մլրդ դոլար արժողությամբ պարտատոմսեր գնելու Ադրբեջանի պատրաստակամության մասին տեղեկությունները մամուլում տեղ գտան (անցյալ) սեպտեմբերին: Այնուհետեւ հունգարական մամուլը տեղեկացրեց Հունգարիայի եւ Ադրբեջանի միջեւ միջնորդի դեր ստանձնելու Թուրքիայի պատրաստակամության մասին: Մինչ այդ Nebszabadzag թերթը ամիսներ շարունակ արծարծում էր Թուրքիայի միջնորդությամբ իրականացվող բանակցությունների հարցը:

Օգոստոսի 2-ին «Ռոյթերը», վկայակոչելով անանուն թուրք պատասխանատուի, գրեց, որ վերջինը հաստատում է բանակցությունների սկզբնավորումը: Թեեւ Ադրբեջանում Հունգարիայի դեսպանությունը հերքեց սակարկությունների մասին պնդումները, սակայն հունգարական կառավարությունը պարտատոմսերի գնման եւ Սաֆարովի հանձնման առնչության մասին դեռեւս ոչ մի հայտարարություն չի արել»:

Ի դեպ, «Միլլիեթին» լրացրեց թուրքական հանրային հեռուստատեսությունը, թե Սաֆարովին ներում շնորհելու առնչությամբ Հունգարիայի արտգործնախարարությունը նոտա է տվել Ադրբեջանին, իսկ մեկ այլ հեռուստատեսություն մատնանշեց, որ Սաֆարովին ընդունել է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունն ու շնորհել նրան մայորի կոչում:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ընթացիկ

# Արտահանձնման չերեւացող երեսը

Շատ լավ է, որ մերոնք կիբեռպատերազմում առավելություն ունեն, որ բլոգերներն ու հակերները լավ են տիրապետում իրենց գործին ու ջարդում են Ադրբեջանի նախագահի կայքը, հետաքրքրական նախաձեռնություններով տալիս ադրբեջանական կիբեռաղտեղության պատասխանը: Սակայն մեր դիվանագիտությունը բոլորովին հակերներն եւ բլոգերները չեն իրականացնելու: Ադրբեջանցի մարդասպանի արտահանձնումից հետո սկսված համատարած «հակահարձակման» մեջ էմոցիայից, հաջող ու անհաջող որակումներից այն կողմ որեւէ բան դեռ հստակ չի երեւում, բացի դրանից` դիվանագիտությունը կամպանիաների ձեւով, դիտվածաբար իրականացնելը ցուցիչ չէ, այլ` տարիների կաթիլ-կաթիլ, ծանր, հաճախ չերեւացող աշխատանքն է ցանկալի արդյունքի ապահովիչը: Մեր դիվանագետների ցանկը նայելիս զարմացնում է այն փաստը, որ նրանց կեսից ավելին պատահական մարդիկ են (խոսքը Հունգարիայում նորանշանակ դեսպանի մասին չէ, որը եթե ավելի վաղ աշխատանքի անցած լիներ` գուցե այս վիճակը չունենայինք): Ով ասես կա այդ ցուցակում, գործարար (հասկանալի է, որ տնտեսական կապերը կարեւոր են, բայց կարելի է առանց դեսպան լինելու այդ կապերի զարգացմանը նպաստել, ինչպես որ առանց գործարար լինելու, դեսպանը կարող է այդ բանն անել), բանասեր, նախկին պատգամավոր, նախկին պաշտոնյա` կարծես մի մասը պարգեւ պատվավոր թոշակի է ուղարկված: Մինչդեռ սա պետք է լինի ամենամասնագիտացված ոլորտը, որտեղ չպետք է ոչ կուսակցական կոնյունկտուրան գործի, ոչ անձնական կապերը, ոչ երկրի առաջին դեմքերին մոտ կանգնած լինելու հանգամանքը: Պատերազմներն աշխարհում նախ մղվում են դիվանագիտական ասպարեզում, աշխարհի պատերազմների նախապատրաստությունների, տարբեր երկների ղեկավար կազմերի` այս կամ այն դիվանագիտական գործունեությանը ցանկալի անձերի նշանակման, ռեգիոնալ մրցավազքերում դիրքերի եւ ազդեցությունների ամրապնդման պատմության մեջ դիվանագիտական անօրինակ խարդավանքի ոչ մեկ պատմություն է թաքնված: Վերջին օրինակներից մեկը Տրոսկանի` հատուկ ծառայությունների պրոֆեսիոնալ կազմակերպած «վնասազերծումն» էր Ֆրանսիայի նախագահական ընտրություններից առաջ, կամ լիբիական պատերազմի` մեծ տերությունների դիվանագիտական հետագիծը: Այնպես որ` ադրբեջանցի մարդասպանի արտահանձնումն ու մեծարումը պետք է լինեն հերթական սթափարանը մեզ համար, քանի որ այսուհետեւ դիվանագիտական ոլորտում մեր անելիքը բազմապատկվում է, ու երկրի նախագահը հավանաբար դեսպանների հարցում մտածելու տեղ ունի: Իսկ ընդհանրապես` այս քանի օրը, հետեւելով արտահանձնման հայկական արձագանքներին` չնկատեցինք տեսակետներ, որոնք էմոցիայից այն կողմ փորձեին խորանալ, թե ի՞նչ կա այս իրադեպի տակ, աշխարհի մեծ խաղացողներից որի՞ն է ձեռնտու տարածաշրջանային լարվածությունն այս օջախից, ո՞վ կարող էր ձեռք դնել արտահանձնման կազմակերպման վրա հենց ա՛յս պահին, հենց ա՛յդ տեսքով (Ադրբեջանում հերոսացման), ո՞ւմ է ձեռք տալիս ղարաբաղյան բանակցությունների ընդհատումը, որովհետեւ ոչ ոք չի կարող պնդել, որ այս բոլորից հետո Ադրբեջանը կամ նույնիսկ Հայաստանը չեն ընդհատի բանակցությունները (քանի որ` այլեւս ինչի՞ շուրջը բանակցել մի երկրի հետ, որտեղ հայ սպանելու համար խելքներն իրենցը չէ, քիչ է, դեռ դա պետականորեն խրախուսում եւ վարձատրում են), տարածաշրջանային նոր լարվածություն չի ստեղծվի, որը հավանաբար որոշ մեծ խաղացողների պետք է Իրանի ու Սիրիայի հետ կապված անհանգստությունները պատերազմի կամ լարվածության նոր օջախ ստեղծելով հակակշռելու եւ սեփական խնդիրները լուծելու համար: Հասարակ տրամաբանությունն անգամ հուշում է, որ այս կարգի (արտահանձնման) երկար նախապատրաստված գործընթացից միշտ տեղյակ են լինում եւ դրանց հետեւում են մեծ երկրների հատուկ ծառայությունները, եւ եթե դա տվյալ երկրների շահերին հակասի` կարող են եւ այդ գործընթացին տարբեր ձեւերով խոչընդոտել (եթե իրենք չեն կազմակերպել, իհարկե): Ուրեմն շահեր կան, այն էլ տասը տակ, որ չեն խոչընդոտել: Իսկ Ադրբեջանը երեւի վաղուց է առիթ փնտրում բանակցությունները դադարեցնելու, բանակցությունների Կազանի ու Սանկտ Պետերբուրգի ռաունդները վկա: Կրտսեր Ալիեւն էլ դիվիդենտներ ձեռք կբերի իր երկրի ներսում այս իրադեպով, մյուս կողմից, եթե բանակցությունները ընդհատվեն, ստիպված չի լինի իր աթոռին սպառնացող զիջումներն անել: ԱՄՆ-ի, եվրոպական շրջանակների` արտահանձնման արձագանքի արտաքին կոշտությունը, Ռուսաստանի լռությունը դեռ չեն նշանակում, որ այստեղ տեղյակ չէին գործընթացի տրամաբանական արդյունքից, եւ գործին, բացի Ադրբեջանից, երեւի թե խառն են մեր տարածաշրջանի այլ երկրներ նույնպես, ում ձեռք է տալիս սիրիական պատերազմի ֆոնին այլ լարվածության օջախների ստեղծումը, որի ընթացքում ամեն մեկն իր խնդիրները կլուծի: Այնպես որ այս պահին էմոցիոնալ քայլեր անելուն զուգահեռ մեզ հարկավոր է սթափ վերլուծություն, խնդրի դիվանագիտական հմուտ դիտարկում, եւ հարկ չկա պահի տակ անել քայլեր, որի հետեւանքները կարող են Հայաստանի համար անդառնալի վիճակներ ստեղծել: Չի խանգարի հիշելը, որ որոշումները պետք է կայացնել տաք սրտով, բայց սառը գլխով, իսկ երբ սիրտն ու գլուխը միաժամանակ տաք են, հետեւանքների մասին խորքային եզրակացության դժվար է հանգել: Այսինքն` մի քանի ծառ տեսնելով` չնետվենք այդ ուղղությամբ, մտածելով, որ արագ դուրս ենք գալու ցանկալի տեղ, ծառերի հետեւում այնպիսի խիտ անտառ կարող է լինել, որի հաղթահարումը շատ ու շատ ջանքեր պիտի պահանջի, ու անգամ մոլորվելու վտանգ կարող է լինել, այսրոպեական դիվիդենտը տարածաշրջանային եռացող կաթսայում գտնվող Հայաստանին պետք չէ: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը գալիս է Հայաստան, այո, նրան ասելու բան ունենք, իսկ միգուցե այդ այցի ամսաթվին է նախորդել արտահանձնման ամսաթվի հարմարեցումը, կամ գուցե ՀԱՊԿ-ի զորավարժություններից առաջ որոշակի շրջանակնե՞ր են բան հասկացնում:



Ավարտելով` մեկ ուշադրության արժանի փաստ միայն նշենք, որ անգամ տեղական ուղղորդում չէ. ԱՄՆ-ի նախագահի հանրապետական թեկնածու Միթ Ռոմնիի քաղաքականությունը նրա կուսակիցները բնորոշել են որպես աշխարհում ԱՄՆ-ի առաջատար դերի վերականգնմանը միտված, իսկ ԱՄՆ-ի գործող փոխնախագահ Ջո Բայդենը զգուշանում է, որ Ռոմնիի հաղթանակը կնշանակի ԱՄՆ-ի ներքաշում երկու` Սիրիայի եւ Իրանի դեմ պատերազմների մեջ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Քննարկվել է սիրիահայերի համար նոր դպրոց բացելու խնդրանքը

**Ինչպես «Ազգին» տեղեկացրին ՀՀ ԿԳՆ-ից, Հայաստանում գտնվող 210 սիրիահայ դպրոցականների (107-ը` հիմնական, 103-ը` ավագ դպրոց), կրթության հարցերը քննարկվել են նախարար Արմեն Աշոտյանի հրավիրած աշխատանքային խորհրդակցության ընթացքում: Քննարկմանը մասնակցել են սփյուռքի նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի, ինչպես նաեւ սիրիահայ համայնքի ներկայացուցիչներ: Վերիջններիս խնդրանքով քննարկվել է Երեւանի դպրոցներից մեկում, Սիրիայի կրթական ծրագրերին համապատասխան, նոր դպրոց հիմնելու հարցը: Արդեն իսկ քննարկվել է մի քանի դպրոցների տարածքների հարցը, եւ որոշվել է, որ կրթական գործընթացի վերահսկողությունը կիրականացնի նախարարության նշանակած պատասխանատուն, որը Արմեն Աշոտյանի առաջարկով պետք է լինի սիրիահայ համայնքի ներկայացուցիչ: Դասագրքերը եւ կրթական ծրագրերը պետք է բերվեն Սիրիայից, եւ սիրիահայ դպրոցականներին կդասավանդեն Սիրիայից եկած ուսուցիչները: Սիրիահայերի դպրոցին ֆինանսապես աջակցելու խնդիրը ստանձնել է Հայաստանի սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը: Նախարարը նաեւ հանձնարարել է, անկախ հանգամանքներից, (եթե նույնիսկ երեխաները Հայաստան են եկել առանց անձնական գործերի), ընդունել դպրոց: Սիրիահայ երեխաները իրենց ցանկությամբ կարող են հաճախել նաեւ սովորական հայկական դպրոց եւ կրթություն ստանալ հայկական ծրագրերով: Խորհրդակցության ընթացքում անդրադարձ է եղել նաեւ բուհերում սովորող սիրիահայ ուսանողների կրթության կազմակերպման խնդիրներին:**

Ս. Ս.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# Միայն անկախության պայմաններում Արցախը կարող է իրեն ապահով զգալ

*1-ին էջից*

**Ապա եւ` Ռուսաստանի հայերս ուզում ենք կոչ անել Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներին եւ այլ պետությունների նախագահներին` ճանաչելու Ղարաբաղի անկախությունը: Ղարաբաղը չի կարող այդ երկրի կազմի մեջ լինել նույնիսկ ամենաբարձր անկախության կարգավիճակով, քանի որ հայ սպանելն այդ երկրում խրախուսվում է բոլոր ձեւերով: Ղարաբաղի անկախությունը ճանաչելու խնդրին պետք է մոտենալ որպես ազգի անվտանգության խնդրի: Ադրբեջանն իր իսկական դեմքը հերթական անգամ ցույց տվեց, եւ հենց այս վերջին օրինակով ապացուցվում է, որ Ղարաբաղը չենք կարող թողնել Ադրբեջանի կազմում:**

**Պետք է սկսենք Ադրբեջանի իշխանություններին դատի տալու գործընթաց, որպեսզի ստիպենք միջազգային հանրությանը` հանցագործին վերադարձնել Եվրոպա եւ միջազգային նորմերով պատասխանատվություն կրել: Բացի դրանից` պետք է ջանքեր ներդնենք, որ Հունգարիայում որոշում կայացնողները հրաժարական տան, այս երկրի ներկայացուցիչները եվրոպական կառույցներում չպետք է պաշտոն զբաղեցնեն` այս անելիս մենք պետք է Հունգարիայում բարեկամներ ու համախոհներ գտնենք, որպեսզի նրանք աջակցեն մեզ գործողությունների այսպիսի ծրագրի իրականացմանը: Իրավաբանական կոնսուլտացիաներ կսկսենք, հարցի լուծման բոլոր իրավական միջազգային ուղիները փնտրելով` դատի տալու համար Ադրբեջանին, Հունգարիայի որոշումը կայացնողներին: ՌՀՄ-ն այս ուղղությամբ է աշխատելու ամենալավ իրավաբանների հետ, մենք հրավիրելու ենք միջազգային իրավաբանական ֆորում այս հարցով, որպեսզի գտնենք հարցը միջազգային դատարան բերելու իրավական մեխանիզմները: Սա մարդկության դեմ ուղղված հանցագործություն է` հղի նրանով, որ կարող է կրկնվել, ուրիշ ազգեր եւս կարող են այս վիճակում հայտնվել եւ կորուստներ ունենալ: Իսկ որ Հունգարիային պետք է մեղադրել` ես այլ ուղղությունից եմ ուզում մոտենալ: Մենք Հունգարիայում պետք է գտնենք բարոյական ընդունված նորմերն ու միջազգային իրավունքի նորմերն ընդունող բարեկամների, կողմնակիցների, որոնք եւս աջակից կլինեն մեզ եւ կպահանջեն այս որոշումն ընդունող իրենց ղեկավարների հրաժարականները: Եվ ոչ մի դեպքում սա չպետք է վերածենք հունգարացիների եւ հայերի պայքարի` կոնկրետ դեպքը, արարքն ենք քննարկում, պետք չէ ընդհանրացնել:**

**- Ներռուսական տարածքում ի՞նչ է արվելու:**

**- Հանրահավաքներ եւ ակցիաներ կանենք Ռուսաստանում: Ռուսաստանի 640 քաղաքում անցկացնելու ենք կոնֆերանսներ, 2,5 մլն-ից ավելի հայ կա այստեղ, որից 6-7 հարյուր հազարը ինչ-որ մի տեղ աշխատում են: Նրանք իրենց ընկերներին կարող են ներգրավել, պետք է բողոքի ակցիաներ անենք եւ հասնենք նրան, որ նախ Ռուսաստանի բարձրագույն իշխանություններն իրենց քայլերն անեն, քանի որ այս իրադեպն անընդունելի է: Ջանքեր պիտի գործադրենք Ղարաբաղի անկախության ճանաչման ուղղությամբ: Մենք պետք է հորդորենք բոլոր երկրների հայությանը, որպեսզի յուրաքանչյուրն իր երկրում հետեւողական աշխատանք տանի եւ դիմի իր երկրի իշխանություններին` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ընդունելու խնդրով, հիմնավորելով, որ հանցագործին պաշտպանելու եւ արդարացնելու իր տգեղ քայլերով Ադրբեջանի իշխանությունը բացահայտ ցույց տվեց, որ ինքը հանցավոր իշխանություն է, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պարզապես չի կարող լինել հանցավոր իշխանության ներքո, քանի որ իր անվտանգությունը ապահովված չի լինի:**

**- Ձեր կարծիքով` կարո՞ղ էինք կանխել տեղի ունեցածը:**

**- Այո: Ինչն ինչպե՞ս է արվում` դրա փորձը ես ունեմ եւ վստահ եմ, որ այդ կարգի գործընթացներին տեղյակ լինելով` կարող էինք կանխել, վստահ եմ, որ կլինեին շատ ուժեր, որոնք կմասնակցեին կանխելուն: Կարեւորը, որ մենք մեր բաժին գործը կանեինք, իսկ թե ինչ կլիներ` դա կլիներ: Բայց դա ոչ ոք մեզ չի առաջարկել: Գուրգեն Մարգարյանի կորուստի խնդիրը չէ միայն, շատ վտանգավոր նախադեպ է տեղի ունեցել: Պետք է Ադրբեջանի արածը շուռ տանք իրենց դեմ եւ ճիշտ օգտագործենք հնարավորությունը: Մեծ ինֆորմացիոն պատերազմ պետք է գնա, եւ պետք է ոչինչ չխնայել դրա համար, քանի որ նախադեպի բաց տեքստը սա է` ամեն հայի սպանող ադրբեջանցի այսուհետեւ Ադրբեջանում հերոս է համարվելու եւ պարտանալու է: Ամենօրյա աշխատանք է պետք: Ամեն մեկը տեղում իր գործը պետք է անի` մտածված, առանց ավելորդ էմոցիայի: Միացնելով ողջ աշխարհի հայկական ուժը ցանկալի արդյունքի կհասնենք:**

**Սա այն քայլը չէ, որ լռենք: Եվ միասնական քայլեր են պետք` մի պահ կողքի դնելով տարաձայնությունները: Եվ որ Հայաստանի նախագահը այդպիսի կեցվածք է որդեգրել, Հայաստանի նախագահի` այս իրադեպին հաջորդած քայլերն ու արձագանքը գնահատելի են. այս հարցի շուրջն անցած ուրբաթ հեռախոսային զրույց եմ ունեցել Հայաստանի նախագահի հետ` նա պատրաստ է աջակցելու մեր բոլոր քայլերին այս ուղղությամբ, մեզ աջակցելու է արտգործնախարարությունը: Մենք պետք է սովորենք մեզ պաշտպանել եւ պետք եղած դեպքում հակահարձակվել` առաջնային դարձնելով միասնականությունն ու հետեւողական պայքարը:**

Ս. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածք` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ Անցուդարձ

# Մենք սիրում ենք մեր քաղաքը

## *Մասիս քաղաքի ավագանու անդամի թեկնածու Սուսաննա Ղազարյան*

**Սուսաննա Ղազարյանը** Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության անդամ է 1991 թվականից: Ապարանյան ծագումով մեծ գերդաստանի դուստր, Մասիսում հարգանք, հեղինակություն վայելող անձնավորություն է: Ըստ կուսակցական ընկերների՝ ամենաակտիվ կուսակցականներից է, ամենուր անձնական լայն կապեր ու ընկերներ ունի, պարզ հոգով, բարեխիղճ, նվիրված ընկեր է, մարդկային շփումներում՝ շիտակ, մարդու ցավին ու հոգսերին արձագանքող, կուսակցության յուրաքանչյուր հանձնարարություն կատարում է բարեխղճորեն:

Կուսակցության ընկերներից այսքան դրվատանքի խոսքեր լսելուց հետո հասկանալի է դառնում, որ նրա հետ շփվելն ու զրուցելը հաճելի գործ է: Իսկ զրույցի առիթը սեպտեմբերի 9-ին կայանալիք Մասիս քաղաքի քաղաքապետի եւ ավագանու ընտրություններն են:

Ս. Ղազարյանը մասնագիտությամբ տնտեսագետ-ապրանքագետ է, 1991թ. Մասիս քաղաքի տպարանի տնօրենն է, ունի նաեւ թարգմանչական գրասենյակներ, իսկ ավելի վաղ՝ ութ տարի աշխատել է Մասիսի շրջանի Ժողկրթբաժնում եւ ամենուր վայելում է աշխատակիցների սերն ու հարգանքը:

Ս. Ղազարյանը ՌԱԿ վարչության անդամ է, Մասիսի տեղական կառույցի ատենապետը (բավական երկար ժամանակ ՌԱԿ գործունեությունը սառեցված էր, եւ հիմա նա ուրախ է, որ այն կրկին աշխուժանում է), Թեքեյան մշակութային միության Արարատի մարզի ու Մասիսի մասնաճյուղի նախագահն է եղել: Պատմում է, որ ժամանակին, երբ կառույցը մարդաշատ էր, մտավորականներով լեցուն, կուսակցության հովանու ներքո շատ ու շատ մեծ միջոցառումներ է կազմակերպել, եւ «այդ բարի համբավը մնացել է, համենայն դեպս, այժմ անկախ կառույցի սակավաթիվ լինելուց՝ շատ մարդիկ ինձ ճանաչում են որպես ռամկավար»:

1999թ. ընտրվել է Մասիս քաղաքի ավագանու անդամ, այնուհետեւ առաջադրվել է նաեւ քաղաքապետի թեկնածու եւ մասնակցել ընտրություններին:

Ինչպես է վերաբերվում այն կարծիքին, որ ավագանին ձեւական կառույց է (մեր հարցն էր այդպիսին), Ս. Ղազարյանը հարցի պատասխանը դիտարկեց անձի հնարավորությունների տիրույթում. «Ես նաեւ մոտ տասներեք տարի աշխատել եմ դատարանում որպես երդվյալ ատենակալ եւ հնարավորության սահմաններում, խորհրդակցելով դատավորի հետ, կարողացել եմ արտահայտել իմ դիրքորոշումը, օգտակար լինել մարդկանց, թող այլ կերպ չինչի, բայց դա ինձ հաջողվել է: Ցանկանում եմ նշել, որ մարդուց, նրա կրթական աստիճանից, իր աշխատելու կարողությունից շատ բան է կախված, այնպես որ ես ավագանու եւ երդվյալ ատենակալների ինստիտուտի մեջ զուգահեռներ եմ տեսնում»:

Այն հարցին, թե՝ «քաղաքապետի ո՞ր թեկնածուի հետ կուզենայիք աշխատել», Ս. Ղազարյանը ընդգծեց՝ երկու թեկնածուներն էլ ունեն շատ յուրովի դրական հատկանիշներ, եւ ավելացրեց, որ ինքն առաջադրված է Ռամկավար Ազատական կուսակցության կողմից, ընդգծեց նաեւ, որ որպես ավագանի աշխատել է ՀՀԿ-ի կողմից ընտրված նախկին քաղաքապետ Սաշա Հակոբյանի հետ, գիտի նրա մարդկային եւ աշխատանքային բարձր հատկանիշները, ներկայումս էլ աջակցում է նրան:



«Իմ ծրագրերի մեջ հաստատուն տեղ են գտել լուրջ խնդիրների լուծումներ, իմ ընտրվելուց հետո, վերընտրված քաղաքապետի հետ միասին հնարավորինս լուծելու ենք Մասիսի մշակութային օջախի, ներքաղաքային օղակաձեւ տրանսպորտի (Մասիս կայարանը ներառյալ), քաղաքի շրջակայքից վերջերս Սովետաշենից տեղափոխված աղբավայրը հեռացնելու խնդիրները մարզպետի՝ Էդիկ Բարսեղյանի գլխավորությամբ»: Ս. Ղազարյանը ավագանու աշխատանքները բարելավելու նպատակով առաջարկում է ավագանիների հանրապետական համաժողով հրավիրել կիսամյակը մեկ, որտեղ կպարզաբանվեն ավագանիների գործունեության լույսն ու ստվերը՝ դառնալով փորձի փոխանակման, թերությունների վերհանման օղակ: «Կարծում եմ՝ դրա անհրաժեշտությունը կա, հատկապես՝ նորընտիր անդամների համար»:

Երկար տարիների փորձից ելնելով, Մասիսի ապագայի մասին մտորումներով, Ս.Ղազարյանը հույսով ակնկալում է, որ ընտրողները կգնահատեն իր նախաձեռնող կեցվածքը, վերը շեշտադրված անձնական հատկությունները եւ վերստին կընտրեն իրեն Մասիս քաղաքի ավագանու նոր կազմում:

# Գնաճը օգոստոսին եղել է 2,5 տոկոս

## *Պարենային ապրանքների գնաճն ավելի ցածր է եղել ընդհանուր գնաճից*

**2012-ի օգոստոսին 2011-ի օգոստոսի նկատմամբ գնաճը կազմել է 2,5 տոկոս: Այս ցուցանիշն է հրապարակել ազգային վիճակագրական ծառայությունը, ներկայացնելով սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2012-ի օգոստոսին: Միաժամանակ, 2012-ի օգոստոսին հուլիսի համեմատ արձանագրվել է 0,4 տոկոս գնանկում, 2011-ի դեկտեմբերի համեմատ գնանկումը կազմել է 2,3 տոկոս, իսկ 2012-ի հունվար-օգոստոսին 2011-ի հունվար-օգոստոսի համեմատ գնաճը կազմել է 2,2 տոկոս:**

**Պարենային ապրանքների՝ ներառյալ ոգելից խմիչքներն ու ծխախոտը, գները 2012-ի օգոստոսին նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել են՝ 2,1 տոկոսով, իսկ այս տարվա հուլիսի համեմատ՝ նվազել 0,8 տոկսով: Ոչ պարենային ապրանքների գները՝ 2011-ի օգոստոսի նկատմամբ աճել են 4,7 տոկոսով, իսկ հուլիսի նկատմամբ՝ 0,1 տոկոսով: Ծառայությունների գները նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել են 2,2 տոկոսով, այս տավա հուլիսի համեմատ՝ մնացել անփոփոխ:**

**Պարենային ապրանքներից այս տարվա հուլիսի նկատմամբ արձանագրված 0,8 տոկոս գնանկման վրա անմիջական ազդեցություն է թողել բանջարեղենի եւ կարտոֆիլի ապրանքախմբի, մրգի, ձվի, կենդանական եւ բուսական յուղի գների 9,2-1,8 տոկոս նվազումը: Միայն բանջարեղենի եւ կարտոֆիլի ապրանքախմբում այս տարվա օգոստոսին անցյալ տարվա օգոստոսի համեմատ գնանկումը կազմել է 12,7 տոկոս, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 9,2 տոկոս: Նվազել են սմբուկի, լոլիկի, կանաչ պղպեղի, գազարի, սխտորի, կարտոֆիլի գները, աճել ճակնդեղի, խառը կանաչեղենի, կանաչ սոխի, կանաչ լոբու, վարունգի գները: Այստեղ գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Վանաձոր քաղաքում:**

**Մրգի ապրանքախմբում 2012 օգոստոսին 2011-ի օգոստոսի նկատմամբ գնանկումը կազմել է 11,6 տոկոս, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 3,6 տոկոս: Նվազել են դեղձի, ձմերուկի, սեխի, տանձի, սալորի, խնձորի գները, աճել կիտրոնի, նարնջի, ելակի գները: Մրգերի գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Թալին քաղաքում:**

**Կաթնամթերքի ապրանքախմբում օգոստոսին հուլիսի նկատմամբ արձանագրվել է 0,7 տոկոս, իսկ անցյալ տարվա օգոստոսի նկատմամբ՝ 1,8 տոկոս գնանկում: Հուլիսի համեմատ գնանկումը պայմանավորված է խտացրած կաթի, «Ջանախ» եւ «Լոռի» պանիրների, կաթի փոշու գնանկումով: Ձվի գները հուլիսի համեմատ նվազել են 2,8 տոկոսով, իսկ անցյալ տարվա օգոստոսի համեմատ՝ 4,4 տոկոսով:**

**Հացամթերքի ապրանքախմբում նախորդ տարվա օգոստոսի համեմատ արձանագրվել է 5 տոկոս, իսկ այս տարվա հուլիսի համեմատ՝ 1,3 տոկոս գնաճ: Մսամթերքի ապրանքախմբում անցյալ տարվա օգոստոսի համեմատ այս օգոստոսին գրանցվել է 4,6 տոկոս, իսկ այս տարվա հուլիսի համեմատ՝ 0,1 տոկոս գնաճ:**

**Հիշեցնենք, որ վերոնշյալ մանրամասները վերաբերում էին բնակչության համար առաջնահերթ նշանակություն ունեցող պարենային մթերքների գներին, իսկ ընդհանրապես սպառողական գների ինդեքսն ազգային վիճակագրական ծառայությունը որոշում է հիմք ընդունելով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

# Ռուսաստանն արձագանքեց. Հանցագործի հերոսացումը կնպաստի տարածաշրջանում առկա լարվածությանը

**Եռօրյա լռությունից հետո՝ երեկ, Ռամիլ Սաֆարովին Ադրբեջան էքստրադիցիայի հանձնման վերաբերյալ, դժբախտաբար ակնկալվածից ցածր մակարդակով, իր մտահոգությունն է հայտնել նաեւ Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը:**

**Ըստ պաշտոնական Մոսկվայի՝ Բաքվի եւ Բուդապեշտի գործողությունները հակասում են Անդրկովկասում լարվածության նվազեցման ջանքերին: Լուկաշեւիչը շեշտել է, որ ԼՂ հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Իգոր Պոպովը խոր մտահոգությամբ է ընդունել Բաքվի կողմից 2004-ին Հունգարիայում հայ սպային հատուկ դաժանությամբ սպանելու համար ցմահ դատապարտված Ռամիլ Սաֆարովին արդարացնելու, նաեւ դրան նախորդած էքստրադիցիայի որոշման մասին հաղորդագրությունները:**

**«Կարծում ենք, որ ադրբեջանական, ինչպես նաեւ հունգարական իշխանությունների գործողությունները հակասում են միջազգային մակարդակով համաձայնեցված ջանքերին, նախ եւ առաջ, ԵԱՀԿ Մինսկի խմբի մասով եւ տարածաշրջանում լարվածության նվազմանը», ասել է Լուկաշեւիչը՝ հավելելով, թե ակնկալում է, որ ստեղծված իրավիճակի համապատասխան գնահատականն ամենամոտ ժամանակ կտան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները:**

**Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելու փաստին երեկ անդրադարձել է նաեւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան: Նա համոզված է՝ որ Ադրբեջանի որոշումը ոչ միայն միջազգային իրավունքների նորմերին է հակասում, այլեւ կասկածի տակ է դնում հանցագործության հակազդման միջպետական համակարգի կենսունակությունը: Բորդյուժայի գնահատմամբ՝ հանցագործի հերոսացումը կնպաստի տարածաշրջանում առկա լարվածության, ու այս դեպքում միջազգային հանրությունը չպետք է ուշանա կատարվածին օբյեկտիվ գնահատական տալու հարցում: Բորդյուժան որեւէ արդարացում չի գտել Հունգարիայի եւ Ադրբեջանի իշխանությունների քայլին, անկախ այն հանգամանքից, թե դա ինչ նպատակով է արված:**

**Հետաքրքրական է, որ Ադրբեջանին Սաֆարովի հանձնմանն առաջինն արձագանքել է ԱՄՆ-ն: Նախ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման մտահոգություն հայտնեց կատարվածի առնչությամբ, այնուհետեւ ԱՄՆ պետքարտուղարությունը հայտարարություն տարածեց՝ շեշտելով, որ Սաֆարովին ներում շնորհելը կշարունակի լարված պահել իրավիճակը տարածաշրջանում: Զարմանալի է, որ առայժմ հայտարարությամբ հանդես չի եկել համանախագահող երրորդ երկիրը՝ Ֆրանսիան, որեւէ հայտարարություն չի տարածել: Առայժմ լուռ են նաեւ Եվրոմիությունն ու ՆԱՏՕ-ն:**

**Հունգարիան ԵՄ անդամ պետություն է եւ այս քայլով խախտել է այն համամարդկային արժեքներն ու օրենքները, որոնք դավանում եւ որոնց հողի վրա հիմնվել է Եվրոմիությունը: Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին, ապա հենց այս կառույցի կազմակերպած դասընթացի ժամանակ է Ռամիլ Սաֆարովը կացնահարել հայ սպա Գուրգեն Մարգարյանին՝ հետեւաբար վերոնշյալ կառույցի տեսակետն ու հայտարարությունն էլ չափազանց կարեւոր են:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Հայռուսգազարդ» ընկերությունում կավելացվի Հայաստանի բաժնեմասը

**Հայաստանի Հանրապետության կառավարությունը սեպտեմբերի 6-ին տեղի ունենալիք նիստում որոշում կընդունի Շիրակի մարզի Ախուրյան գյուղին, Լոռու մարզի Արծնիի գյուղին, Տավուշի մարզի Թեղուտ գյուղին, Սյունիքի մարզի Քաջարան քաղաքին, Լեռնաձոր գյուղին, Կապան քաղաքին, Գորիս քաղաքին սեփականության իրավունքով պատկանող գազաբաշխիչ գազատարները փոխանցել էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը: Վերջինս էլ այդ գազատարները պետք է ներդնի «Հայռուսգազարդի» կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու եւ Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխելու միջոցով:**

Ա. Մ.

# Տարոն Մարգարյան. «Բացառել կուտակումները կանգառներում»

## *Ինչը, սակայն, ոչ մի կերպ չի հաջողվում*

Սեպտեմբերից դպրոցների եւ բուհերի դասերի վերսկսման հետ կապված՝ քաղաքապետ **Տարոն Մարգարյանը** երեկ քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ հանձնարարել է շարունակել ամենօրյա հսկողությունը հասարակական ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման որակի ուղղությամբ եւ կանգառներում բացառել կուտակումները:

«Ինչպես քաղաքապետարանի ենթակայության տրանսպորտային ձեռնարկությունների, այնպես էլ մասնավոր ընկերությունների ուղեւորափոխադրումների նկատմամբ սահմանենք խիստ վերահսկողություն: Հատուկ ուշադրություն դարձնենք երթուղի դուրս բերվող մեքենաքանակին եւ խստորեն վերահսկենք, որ հատկապես առավոտյան եւ երեկոյան առավել ծանրաբեռնված ժամերին դրանք աշխատեն սահմանված ժամանակացույցի համաձայն, առանց ուշացումների», ընդգծել է Տարոն Մարգարյանը:

Այդուհանդերձ, սեպտեմբերի 1-ին, հատկապես միջանկյալ կանգառներում եւ առավոտյան ժամերին, կուտակումները չէին նվազում: Դարձյալ անհասկանալի էր, թե առավոտյան ո՞ր ժամից են սկսում աշխատել ավտոբուսները եւ ի՞նչ միջակայքով են դուրս գալիս երթուղիներ: Երեւանի քաղաքապետարանը ոչ մի կերպ չի ցանկանում հրապարակայնացնել, թե փոխադրամիջոցները ի՞նչ ժամանակային միջակայքով են դուրս գալիս երթուղիներ, ո՞ր ժամից մինչեւ ո՞ր ժամը պետք է աշխատեն, ի՞նչ ժամանակային գրաֆիկով պետք է աշխատեն շաբաթ եւ կիրակի օրերին: Մի քանի անգամ քաղաքապետարանը հայտարարել էր, որ շուտով կանգառներում կտեղադրվեն էլեկտրոնային վահանակներ, եւ մարդիկ կտեսնեն, թե երբ պետք է ժամանի իրենց անհրաժեշտ ավտոբուսը: Քաղաքապետը հավանաբար արդեն մոռացել է դրա մասին:

Ա. Մ.

## Անդրադարձ

# Անկախության եւ խիզախության ապացուցման ժամանակը

Քաղաքականության մեջ երբեք ուշ չի լինում, քանի որ այնտեղ մշտապես ամեն փակված դուռ կամ պարտություն կանգնեցնում է նոր դռների առջեւ՝ տալով հաղթանակների հնարավորություն: Սաֆարովի էքստրադիցիան հենց այսպիսի դեպք է:

Անցած օրերին ակնհայտ դարձավ, որ չնայած Ադրբեջանը Հունգարիայի հետ արդեն տեւական ժամանակ դիվանագիտական լուրջ աշխատանքներ է կատարում էքստրադիցիան կազմակերպելու նպատակով, իսկ Սաֆարովի դատավճռի հաջորդ տարուց Բուդապեշտում դեսպանատուն է բացում՝ բացահայտ խոստովանելով, որ դա կատարում է Սաֆարովին Ադրբեջան վերադարձնելու համար, սակայն էքստրադիցիան գործնական պայմանավորվածության տեսք ստացավ Հունգարիայի վարչապետ Օրբանի Բաքու կատարած այցի ժամանակ, անձամբ իր ու Իլհամ Ալիեւի անհատական պայմանավորվածությամբ: Սա վերստին ապացուցում է այս գործընթացի կոռումպացվածությունը, ինչն իր հերթին՝ Հունգարիայի մեղավորությունը, քանի որ նման գործընթացները որպես օրենք կատարվում են պետությունների համապատասխան գերատեսչությունների միջեւ ընթացող տեւական բանակցությունների արդյունքում, այլ ոչ թե այդ գերատեսչությունների ամենավերեւներից համապատասխան հրահանգներով:

Հունգարական կողմի այն հավաստիացումները, թե «մենք գործել ենք միջազգային իրավունքին համապատասխան», Ստրասբուրգի՝ 1983-ին ընդունված՝ Դատապարտված անձանց տեղափոխման մասին կոնվենցիայի «տառին ու ոգուն համահունչ», առնվազն զավեշտալի են. անհնար էր, որ Բուդապեշտը ադրբեջանական կողմի իրական նպատակի, այն է՝ Սաֆարովին Բաքու ժամանելուն պես ազատ արձակելու մասին տեղյակ չլիներ. միայն հայկական կողմը, թերեւս միայն, հասարակական մակարդակով, բազմիցս է այս մասին զգուշացրել Բուդապեշտին:

Ուրեմն Հունգարիան շատ լավ էլ գիտակցել է, թե ինչպիսի ջուր է մտնում: Այլ հարց է, որ Բուդապեշտի ու Բաքվի միջեւ ձեռք է բերվել պայմանավորվածություն, ըստ որի Բաքուն պարտավորվել է գործարքի ողջ պատասխանատվությունը վերցնել իր վրա՝ ազատելով Բուդապեշտին միջազգային սկանդալից: Սրանով են պայմանավորվում հունգարական կողմի արդարացումները, թե «մենք ամեն ինչ կոնվենցիային համապատասխան ենք արել, Ադրբեջանն է խաբել է մեզ», եւ սրան զուգահեռ ադրբեջանական կողմի՝ այս առումով ամենեւին էլ չհակադարձումը Հունգարիային:

Այսինքն Բաքուն ամենեւին էլ չի խորշում մտքից, որ ինքը Բուդապեշտին խաբել է՝ դրանով իսկ, ինչպես վերը նշեցինք, Բուդապեշտին փորձում է ազատել պատասխանատվությունից: Սակայն դա ապահովել Բաքվին չհաջողվեց. մասնավորապես Հայաստանն ամենաբարձր մակարդակով հայտարարեց նաեւ հունգարական կողմի պատասխանատվության մասին՝ կասեցնելով վերջինիս հետ «բոլոր տեսակի պաշտոնական կապերը», եւ հունգարական այս քայլի առնչությամբ իրենց տարակուսանքը հայտնեցին Շվեդիան՝ ԱԳ նախարարի մակարդակով, ԱՄՆ-ը՝ Սպիտակ տան խոսնակի ու պետքարտուղարության ներկայացուցչի մակարդակներով:

Վաշինգտոնը ավելին արեց՝ «պարզաբանում պահանջելով Բուդապեշտից»: Ուրեմն, այ այստեղ հաստատապես Ադրբեջանը խաբեց Հունգարիային, քանի որ վերջինս եւս այս օրերին միջազգային հանրության ու քաղաքակիրթ մարդկության քննադատության թիրախում է: Այն, որ հունգարական կողմը լավ հասկացել է Սաֆարովի էքստրադիցիան Ադրբեջան կատարելու արդյունքը, ապացուցվում է նաեւ հանգամանքով, որ Բուդապեշտը փաստորեն խաբել է պաշտոնական Երեւանին, մասնավորապես՝ Սաֆարովի էքստրադիցիայի փաստից մեկ շաբաթ առաջ հավաստիացնելով հայկական կողմին, թե Ադրբեջանի հետ Հունգարիան Սաֆարովի էքստրադիցիան կազմակերպելու բանակցություններ չի վարում: Միանշանակ է, որ այդ բանակցություններն ընթացել են ավելի, քան մեկ շաբաթն է, անգամ մեկ ամիսը կամ մեկ տարին, հետեւաբար, խաբելով հայկական կողմին, հունգարական կողմը այդպիսով ցանկացել է Երեւանին դնել post factum իրավիճակում, երբ Երեւանն այլեւս հստակ իրավական դաշտում գործելու լայն հնարավորություններ չունի: Անկախ այս ամենից՝ հայկական կողմը պետք է գործեր, չի գործել, բայց ինչպես սկզբում նշեցինք՝ քաղաքականության մեջ երբեք ուշ չի լինում:

Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն **Ռիչարդ Կիրակոսյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանն ընդգծեց, որ «Հայաստանում ռազմավարական մտածողության խնդիր ունենք: Պետք է պլանավորել անգամ այն, ինչը անհնարին է սպասելը: Արդարացի լինենք ու խոստովանենք, որ ՀՀ ԱԳՆ-ն այս իրադարձությանը բավարար պատրաստված չէր»: Եթե ԱԳՆ-ն պատրաստված չէր, ապա հայաստանյան ավելին քան 80 ՀԿ-ներ արդեն ստորագրահավաք էին կազմակերպում՝ Սաֆարովի էքստրադիցիան թույլ չտալու համար, այսինքն, ՀԿ-ներն, ի տարբերություն երկրի արտաքին քաղաքական գերատեսչության, այս վտանգը տեսնում էին ու փորձում թույլ չտալ: Չստացվեց, ու գիտե՞ք ինչու, որովհետեւ Հայաստանում մենք ոչ միայն ռազմավարական մտածողության խնդիր ունենք, այլեւ պետական գերատեսչության կողմից հասարակությանը լսելու, նրա ասածներն ընդունելու խնդիր ունենք: Երբ այս վերջին խնդիրը չունենանք, կարող է եւ այնպես պատահել, որ ռազմավարական մտածողության խնդիր էլ չենք ունենա: Ուրեմն սա առաջին անելիքը՝ ապագայի համար ու այս պարտությունից եւս մեկ դաս:

Հաջորդը, ինչո՞ւ է լռում Մոսկվան եւ կամ իրավունք ունի՞ արդյոք նման զգայուն հարցում լռելու Հայաստանի ռազմավարական, աշխարհաքաղաքական դաշնակիցը, որի զինված բազան՝ ՀՀ ԶՈւ-ի հետ 49 տարով ապահովում է ՀՀ անվտանգությունը՝ վերջինիս պետական սահմանի ողջ երկայնքով: Ուրեմն այս լռությունը դաշնակցային պարտավորությունների խախտում չէ՞... Ռիչարդ Կիրակոսյանն այս առումով ասում է. «Հատկանշական է, որ ԱՄՆ-ը առաջիններից մեկը արձագանքեց իրադարձությանը, եւ սա Մոսկվայի լռության պայմաններում ավելի զիլ է հնչում: Նկատենք, որ երբ Հայաստանում որոշակի ճգնաժամ է, Մոսկվան գրեթե մշտապես լռում է»:

Անշուշտ տարակուսանք առաջացնում է Մոսկվայի լռությունն այն պարագայում, երբ Ռուսաստանը Մինսկի խմբի համանախագահող անդամ է... Ուրեմն, Ռուսաստանը «մեր գերագույն գլխավոր դաշնակիցն է» ասելով, այսօրից հետո՞ էլ պետք է առաջ գնանք... Ռուսաստանից բացի, ընդունենք, որ այս հարցում միջազգային հանրության՝ կոնկրետ Բրյուսելի արձագանքը եւս ուշանում է, երբ Հունգարիան ԵՄ անդամ՝ եվրոպական արժեքների կրող է, իսկ Ադրբեջանը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ լինելուց զատ, նաեւ մասնակիցն է մի շարք եվրոպական ծրագրերի: Մինչդեռ ՀՀ-ն ամենաբարձր մակարդակով բազմիցս է հայտարարել իր եվրոինտեգրումը որպես քաղաքական առաջնահերթություն ունենալու մասին:

Ռիչարդ Կիրակոսյանն ասում է, որ «եթե միջազգային հանրությունից ուժեղ արձագանքներ չլինեն, ապա Հայաստանը կարող է հայտարարել իր քաղաքական առաջնահերթությունների վերանայման մասին»: Իսկ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ֆոգ Ռասմուսենի գալիք այցի ժամանակ, ըստ Կիրակոսյանի, «նախագահ Սարգսյանը կարող է ընդգծել, որ Գուրգեն Մարգարյանը սպանվեց ՆԱՏՕ-ի դասընթացների ժամանակ, հետեւաբար ՆԱՏՕ-ն չկարողացավ ապահովել հայ սպայի անվտանգությունը»: Եթե ՆԱՏՕ-ն չի կարողանում ապահովել հայ սպայի անվտանգությունը, եթե միջազգային՝ եվրոպական հանրությունը կամ լռում է, կամ ուժգին չի դատապարտում կատարվածն ու կատարողներին, իսկ Մոսկվան էլ լռում է առհասարակ... արդյոք սա մեր ամենակարեւոր դասը չէ՞ այս ամենից:

Օրինակ, ինչո՞ւ հենց այս իրադարձության համապատկերում վերջնականապես չճանաչել ԼՂՀ-ն մի կարեւոր ձեւակերպմամբ, սակայն, որ ԼՂՀ-ի տարածքի մի հատվածը շարունակում է գտնվել ադրբեջանական օկուպացիայի տակ: Եվ մեր սփյուռքի օջախների ջանքերով միջազգային խոշոր շարժում չսկսել ԼՂՀ-ի ճանաչման համար, սրա իրավական ու բարոյական բոլոր հիմքերը մենք ունենք: Ռիչարդ Կիրակոսյանը նշում է. «Խելացի կլիներ, եթե Հայաստանը դուրս գար ԼՂ բանակցություններից՝ անիմաստ համարելով հետագա շփումը Ադրբեջանի հետ Մինսկի խմբի շրջանակներում»: Գուցե եւ «խելացի լիներ», սակայն ո՞վ ասաց, որ բանակցություններից հրաժարումը պատերազմի ուղիղ վտանգ չէ, մանավանդ որ, ինչպես Կիրակոսյանն է ընդգծում, «այսօր Ադրբեջանը շատ վտանգավոր ու անկանխատեսելի թշնամի է», կամ ո՞վ ասաց, որ այս հայկական հրաժարումից հետո Մինսկի խմբի կազմը եւս չի վերանայվի՝ հայկական կողմերի համար խիստ անցանկալի անդամներ այնտեղ ներառելով:

Ամեն ինչ հնարավոր է, հնարավոր է, որ անգամ Մինսկի խմբի շրջանակներում բանակցություններից հրաժարվելն է ավելի խելացի, քան դրանք շարունակելը, բայց ամենախելացին, ինչը մենք այսօր պետք է անենք՝ մեր անկախության եւ խիզախության ապացուցումն է:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ՀԱԿԱԶԴԵՑԻԿ

# Մանկավարժական համալսարանը դատապարտում է

**Չնայած սեպտեմբերյան տոնական տրամադրությանն ու Գիտելիքի օրվա հանդիսություններին՝ Մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը հանդես եկավ դատապարտման եւ համախմբման կոչ-նախաձեռնությամբ:**

**Ձեր դրոշներին կացին նկարեք եւ հրաժարվեք մահմեդականությունից, որը հումանիզմ-մարդասիրություն է քարոզում: Դուք չեք կարող նույնիսկ իսկական մահմեդականներ լինել՝ Ադրբեջանին ուղղված նման կոչով հանդես եկավ Մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր Յուրի Դավթյանը: Նա նաեւ ափսոսանք արտահայտեց եվրոընտանիքի անդամ երկրի գործողությունների կապակցությամբ. «Ցավում եմ, որ իբր թե համամարդկային արժեքներ դավանող Հունգարիան ծախվեց Ադրբեջանին»: Յուրի Դավթյանը նկատի ուներ տարածված այն լուրը, թե այս գործարքը երեք միլիարդ դոլար է արժեցել:**

**Բանասիրական ֆակուլտետի դեկանը նկատեց, որ Սաֆարովին ներելու եւ հերոսացնելու նախադեպն ապացուցում է այն ճշմարտությունը, որ Արցախի հայությունը անկարող է ապրել մարդասպան ոճրագործների հետ համատեղ: «Եվ դա պետք է աշխարհը մեկընդմիշտ հասկանա»:**

**Հիշեցնենք, որ Բուդապեշտում ազգությամբ հայ սպա Գուրգեն Մարգարյանին կացնահարած ադրբեջանցի սպան՝ Հունգարիայի դատարանի կողմից ցմահ դատապարտված Ռամիլ Սաֆարովը, օրերս արտահանձնվել էր Ադրբեջան, որտեղ էլ արժանացել էր ներման եւ ազատ արձակվել:**

**Մանկավարժական համալսարանի ուսանողուհի Նաիրա Խումարյանն այս իրադարձությունը համարում է արդարադատության, ազնվության, համամարդկային արժեքների վերջնական կորստի նախանշան: «Մի բան է, երբ մարդ ընդունում եւ հասկանում է իր մեղքը, հետո են ներում ու թողություն տալիս, մեկ այլ բան՝ երբ խրախուսում եւ հերոսի կոչման են արժանացնում: Մեր համալսարանի ողջ ուսանողությունը դատապարտում է կատարվածը: Մենք շարունակելու ենք մեր բողոքը մինչեւ արդարության վերականգնումը»,- ընդգծեց Նաիրան:**

**Այս նախաձեռնությամբ հեղինակները կոչ են անում օգտվել ընձեռված հնարավորությունից՝ աշխարհին եւս մեկ անգամ ապացուցելու, որ՝ մեր գործն արդար է, եւ մենք հաղթելու ենք:**

# Ալիեւի ներումը Բաքուն դարձնում է կացնահարողների մայրաքաղաք

**Նման վերնագրով հաղորդագրություն է ստացել խմբագրությունը Ավստրալիայի ՌԱԿ Հայկական իրավանց խորհրդից (ԱՀԻԽ), որտեղ անդրադառնալով կացնահարող-մարդասպան Ռամիլ Սաֆարովին ադրբեջանական իշխանություններին հանձնելուն, խստիվ դատապարտվում է Հունգարիայի կառավարության որոշումը եւ զորակցություն հայտնում Հունգարիայի հետ դիվանագիտական հարաբերությունները կասեցնելու վերաբերյալ Հայաստանի նախագահի հայտարարությանը:**

**«ՌԱԿ-ը պահանջում է, որ Հունգարիան բացահայտի Ադրբեջանի հետ համաձայնության գալու բոլոր մանրամասները, նաեւ «ռազմավարական սխալ» է համարում Ալիեւի ներում շնորհելը, որը վճռորոշ դեր է կատարելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերջնական կարգավիճակի շուրջը տարվող ապագա բանակցությունների ժամանակ: Մենք հետեւյալ հարցերն ենք ուղղում միջազգային հանրությանը. ինչպե՞ս կարելի է ԼՂՀ 140 հազար հայ քաղաքացիների անվտանգությունը ապահովել ազերի իշխանության ներքո, երբ ազերի նախագահը հակահայկական նման քայլ է կատարում՝ ներում շնորհելով Գուրգեն Մարգարյանին կացնահարած մարդասպանին: Ինչպե՞ս կարելի է վստահել բռնատեր Ալիեւի խոստումներին, պարտավորվածություններին, երբ նա չկարողացավ պահել Հունգարիային տված խոստումը, թե մարդասպանը Ադրբեջանում շարունակի կրել իր պատիժը:**

**Ալիեւը գուցե Բաքվի արեւի տակ տաքանում է եւ հպարտ է իր գործադրած ջանքերով, իսկ Սաֆարովն էլ գուցե ազատ թափառում է Բաքվի փողոցներով, բայց որքա՞ն ժամանակ է նա կարողանալու խուսափել արդարությունից՝ հայի անմեղ արյունը թափելու համար:**

**Եթե պատմությունը հուսալի ցուցիչ է, ապա հավանաբար ոչ շատ երկար ժամանակ, ինչպես եղավ Հայոց ցեղասպանությունն իրագործած Թալեաթ փաշայի, Ջեմալ փաշայի եւ Էնվեր փաշայի հետ», ասված է ԱՀԻԽ-ի հայտարարության մեջ:**

# Բակո Սահակյան. «Ազատագրված տարածքները...»

*1-ին էջից*

Արցախ այցելության հինգ օրերի ընթացքում Լիբանանից ժամանած ավելի քան 50 հոգուց բաղկացած պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաեւ ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի, ինչպես նաեւ Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավարության եւ վարկառուների հետ Բերձորում, եւ Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարության եւ վարկառուների հետ Դադիվանքում: Պատվիրակության անդամները անցան հարյուրավոր կիլոմետրեր, եղան Քարվաճառի լեռնային հատվածում եւ Հակարի գետի ավազանի մի շարք գյուղական համայնքներում ու Արաքսի ափին, այցելեցին Դրմբոնի «Բեյս մեթալս» հանքարդյունաբերական համալիր:

Լիբանանյան կապիտալով Կիպրոսում գրանցված ԱՐԻ (Artsakh Roots Investment) ընկերությանը երկարաժամկետ, ցածր տոկոսադրույքով եւ առանց գրավի վարկեր է տրամադրում ԼՂՀ գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին, որն էլ իր հերթին վարկավորում է գյուղատնտեսությունն ու անասնապահությունը Քաշաթաղի եւ Շահումյանի շրջաններում: Անցնող երկու տարիների ընթացքում շուրջ 1.5 միլիոն դոլար է ուղղվել ավելի քան 600 մանր տնտեսությունների տնային տնտեսություններում: Ստացված վարկերով գյուղացիները գնում են անասուններ, զբաղվում մեղվաբուծությամբ եւ գյուղատնտեսությամբ:

Այցի ընթացքում Լիբանանի «Արցախ» ֆոնդի ներկայացուցիչները մի քանի ընտանիքների կթու կովեր նվիրեցին Իշխանաձորում եւ Կովսականում: Արդեն հինգ տարի ֆոնդը կթու կով է տրամադրում Մռավից Արաքս ընկած բնակավայրերի բոլոր այն ընտանիքներին, որտեղ ծնվում է երրորդ եւ հաջորդ երեխան: Այս տարի բարեգործությունից կօգտվեն ավելի քան 150 ընտանիքներ: Հինգ տարիների ընթացքում «Արցախ» ֆոնդը ավելի քան 500 կով է բաժանել:

## Միջազգային

# Սիրիահայ համայնքն արյունաքամ է լինում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայոց պատմությունը կորուստների շարան է եղել. տարածքների կորուստ, առաջնորդների կորուստ, արյան եւ վերջապես բնակչության կորուստ: Եթե հայերին թողնեին իրենց պատմական հայրենիքում, նրանք այժմ առնվազն 20 միլիոն կլինեին, ինչպես քրդերը, որոնք հակառակ ճնշումների, երբեք արմատախիլ չարվեցին իրենց բնակավայրից: Այնպես որ, կյանքի որեւէ նոր կորուստ անպայման պետք է մտահոգի աշխարհասփյուռ հայ համայնքներին:

Մենք ի վիճակի չենք այլեւս նոր կորուստներ ունենալու: Առանց այն էլ մշակույթների համահարթեցման եւ ինքնությունների օտարացման գործընթացներն իրենց բաժինը խլում են մեզանից:

Երակներում իրենց նախնյաց արյունը պահպանած հայերն աշխարհով մեկ տագնապ եւ անհանգստություն ապրեցին, երբ աղետալի իրադարձությունները ցնցեցին Սփյուռքի հնագույն համայնքներից մեկի՝ սիրիահայ համայնքի հիմքերը: Վաթսուն հազարի հասնող հայկական համայնքն այնտեղ հիմնականում կենտրոնացած է Հալեպում: Փոքր համայնքներ կան նաեւ մայրաքաղաք Դամասկոսում, Քեսաբում, Լաթաքիայում եւ Քամիշլիում:

Հալեպը Դեր Զորին ամենամոտիկ գլխավոր քաղաքն էր, եւ Եղեռնից մազապուրծ հայերն, իրենց անապատային տարագրության վերջում հանգրվանեցին այնտեղ: Տեղացիները սրտաբաց եւ գրկաբաց ընդունեցին նրանց, հայերը դարձան օրինապահ եւ ստեղծագործ քաղաքացիներ՝ մեծապես նպաստելով երկրի արդյունաբերության, տնտեսության եւ տեխնոլոգիաների զարգացմանը: Նրանց տրամադրվեց հանգիստ ու խաղաղ կյանք, ի հեճուկս արեւմտյան մամուլի առաջացրած դիվային եւ մտքեր պղտորող վայնասունի:

Այսօր դրսից ներմուծված ընդդիմությունը հայերին մեղադրում է չեզոք դիրք բռնելու կամ Ասադի վարչակարգը պաշտպանելու մեջ, մի դիրքորոշում, որը չափազանց նպաստավոր է եղել հայերին եւ ընդհանրապես բոլոր փոքրամասնություններին մինչեւ օրս:

Լոնդոնյան «Ինդիփենդենտ» օրաթերթի մերձավորարեւելյան թղթակից Ռոբերտ Ֆիսքը վերջերս իր սյունակներից մեկում գրում էր, որ պարզապես հեգնական է Արեւմուտքի համար Քաթարի էմիրության կամ Սաուդյան Արաբիայի նման միջնադարյան բռնապետություններին վստահել, որ իբր ժողովրդավարություն կբերեն Սիրիային:

Սա, իհարկե, լայնածավալ քաղաքական խաղ է, «ժողովրդավարության» կամ «արաբական զարթոնքի» քողի տակ խաղացված, որի իսկական նպատակն է արաբական երկրներին պահել իրարանցման, խառնաշփոթության մեջ, որպեսզի վերջիններս չկարողանան դիմակայել Իսրայելին:

Մ. Նահանգները դրանում ոչ մի շահ չունի, մինչդեռ կորցնելու շատ բան ունի իր դեմ հանելով մի ամբողջ տարածաշրջան, այն դեպքում, երբ բենզինի լցակայաններում ամերիկացի հարկատուները արդեն իսկ չափազանց մեծ գումարներ են վճարում:

Այս քաղաքական խաղի գլխավոր պատասխանատուն, չարագործը, անշուշտ Թուրքիան է, որն ստանձնել է տարածաշրջանի առաջատար պետության դերը: Վերջերս այդ երկրի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, պարծենալով իր երկրի ձեռք բերած նոր դերակատարությամբ, տարածաշրջանի հակամարտող կողմերին կոչ էր անում իրենց հարցերը լուծել Թուրքիայի միջնորդությամբ: Նա մասնավորապես խոսում էր սիրիական եւ ղարաբաղյան ճգնաժամերի մասին: Թուրքիայի կողմից նման «բարյացակամ» մոտեցումը հեգնանք է առաջացնում՝ հաշվի առնելով, որ երկու հակամարտությունների դեպքում էլ խառն է իր մատը: Նա դեռեւս շրջափակման մեջ է պահում Հայաստանին եւ ազերի զինվորներին վարժեցնում կռվելու հայերի դեմ եւ թափելու հայերի արյունը: Սիրիայի դեպքում սադրիչը դարձյալ Անկարան է: Վարձկաններին զինելով եւ մարտի ուղարկելով՝ աշխարհին փորձում է համոզել, որ տեղացի ժողովուրդն է ժողովրդավարության ձգտումներով դեմ դուրս եկել վարչակարգին: Այսպիսով, Թուրքիան նաեւ ստեղծում է խնդիրները, իսկ հետո ցինիկաբար հրավիրում հակամարտող կողմերին բանակցելու եւ խաղաղություն կնքելու ի՛ր միջնորդությամբ:

Անշուշտ, Սիրիայի կառավարության տապալումը ցանկացողներին քիչ է հետաքրքրում, թե ինչ կկատարվի այնտեղ ծվարած հայկական համայնքի հետ: Թուրքիան, ընդհակառակը, հավելյալ դրդապատճառ ունի Սիրիայում իր «առաքելությունը» առաջ տանելու համար եւ դա տեղի հայկական ծաղկուն համայնքի ոչնչացումն է նախքան Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը:

Հետեւաբար, աշխարհասփյուռ հայերի պարտականությունն է կազմակերպվել եւ միասնական ուժերով օգնել, որ սիրիահայերը հնարավորինս մնան իրենց տեղերում, իսկ տեղահանվածներին՝ պատսպարել:

Բարեբախտաբար, արձագանքները դրական են եւ քաջալերիչ: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն եւ Կիլիկիայի կաթողիկոս Արամ Ա-ն ոչ միայն համապատասխան զորակցական ուղերձներով են հանդես եկել, այլեւ կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ օգնելու փախստականներին:

Հայաստանի կառավարությունն էլ խիզախ միջոցառումներ է իրականացնում պատսպարելու, իր հովանու տակ վերցնելու սիրիահայերին, անկախ այն հանգամանքից՝ մնում են նրանք Սիրիայում, թե ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատում Հայաստանում:

Զգուշավոր մասնակցություն ունենալով Սիրիայի հանդեպ կիրառվող համաշխարհային քաղաքականությանը, Հայաստանի կառավարությունը, այդուհանդերձ, հետեւողականորեն Հայաստան է տեղափոխում սիրիահայ երեխաներին եւ բնակարանային, աշխատանքային, բժշկական եւ կրթական հարցերում փորձում է օգնել արդեն Հայաստան ժամանած ընտանիքներին:

ՀԲԸՄ-ն իր հերթին որոշում է կայացրել մեկ միլիոն ամերիկյան դոլարի օժանդակություն ցուցաբերել Սիրիայի հայ համայնքի կարիքներին եւ անհրաժեշտության դեպքում պատսպարել երկրից ստիպողաբար հեռացողներին Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության բնակարանային կառույցներում:

Այսպիսով, ՀԲԸՄ-ն, հավատարիմ արտակարգ իրավիճակներում ժողովրդին նեցուկ կանգնելու իր ավանդական դերակատարությանը, մեկ անգամ եւս որդեգրում է արժանավայել հանձնառու կեցվածք:

Միաժամանակ Մ. Նահանգների արեւմտյան ափում եւ այլուր համատեղ հանձնախմբեր են կազմվել սիրիական ճգնաժամի առնչությամբ:

Նման անմիջական արձագանքն, ինչ խոսք, գովելի է, սակայն պետք է զգուշանալ չհամագործակցված քայլերից, որոնք սոսկ ուժերի վատնում կարող են լինել: Փոխանակ միմյանց հետ համադրելու քաղաքական եւ հումանիտար օժանդակությունը, որոշ հայկական ավանդական խմբակցություններ կարծես մրցակցության են դուրս եկել ցույց տալու համար, թե ով ինչքանով է օժանդակում:

Սիրիահայ համայնքը արյունաքամ է լինում եւ արժանի է ամեն տեսակի օժանդակության: Իսկ օժանդակությունը տեղ հասցնելու գործընթացը գուցե սովորեցնի մեզ ավելի կազմակերպված եւ միասնական լինել մեր գործողություններում:

**Դետրոյթ, ԱՄՆ**
**Թարգմ.՝ Հ. Ծ.**

# Լոնդոնը սառեցրել է Մուբարաքի ոչ բոլոր ակտիվները

**Մեծ Բրիտանիայի իշխանությունները սառեցրել են Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքի, նրա ընտանիքի անդամների եւ զինակիցների ոչ բոլոր ակտիվները: Այդ են վկայում BBC հեռուստառադիոընկերության վեցամսյա հետաքննության արդյունքները:**

**Պարզվել է, որ Մեծ Բրիտանիայում գրանցված եւ Մուբարաքի կրտսեր որդուն՝ Ջամալ Մուբարաքին պատկանող Medinvest Associates ներդրումային ընկերությունը շարունակել է գործել պատժամիջոցների ձեռնարկումից 11 ամիս անց: Ավելի ուշ Ջամալը ինքնակամ դուրս է եկել ֆիրմայի ղեկավարների կազմից:**

**Նաեւ պարզվել է, որ 2011-ի նոյեմբերին Եգիպտոսի զբոսաշրջության նախկին նախարարի կինը՝ Նուգլա էլ Գիազառլեյը Լոնդոնում գրանցել է սեփական ֆիրմա՝ չնայած դրանից յոթ ամիս առաջ նրա դեմ ձեռնարկված պատժամիջոցներին:**

**«Գարդիան» թերթը հավելում է, որ Մուբարաքի որդիները եւ կառավարության որոշ նախկին անդամներ առաջվա պես էլիտար տներ ունեն Լոնդոնի Չելսի եւ Նաթաբրիջ շրջաններում:**

**2011-ի փետրվարին Մուբարաքի պաշտոնանկությունից հետո նրա եւ իր մերձավորների դեմ պատժամիջոցներ ձեռնարկվեցին: Միայն Մեծ Բրիտանիայում սառեցվեցին ընդհանուր առմամբ 135 մլն դոլարի ակտիվներ: Եգիպտոսի ներկայիս իշխանությունները Լոնդոնից խնդրում են իրենց հանձնել վերոհիշյալ հետաքննությամբ բացահայտված ակտիվները:**

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# Իրանը Ասադին կօգնի ԱՄՆ-ի հարձակման դեպքում

## *Վերջինս խնդրում է չհարվածել իր մերձավորարեւելյան օբյեկտներին*

Իրանը Սիրիային կօգնի, եթե ԱՄՆ-ը այդ երկրում դիմի ռազմական միջամտության: Այդ մասին հայտարարել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի մշակույթի եւ քարոզչության հանձնախմբի ղեկավար Մոհամմեդ Ալի Ասուդին:

Նրա խոսքերով, եթե Վաշինգտոնը Սիրիա ներխուժելու «հիմար» որոշում ընդունի, Իրանը եւ Դամասկոսի մյուս դաշնակիցները ստիպված կլինեն ձեռնարկել «պատասխան քայլեր, որոնք «կհանգեցնեն ԱՄՆ-ի քայլի կատարյալ ձախողմանը»:

Ասուդին ընդգծել է, որ գործողություններ կձեռնարկվեն երկկողմ ռազմական համաձայնագրին համապատասխան:

Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Իրանը եւ Սիրիան արտաքին թշնամիներից պաշտպանվելիս իրար օգնելու համաձայնագիր են ստորագրել 2006-ին: Փաստաթղթի մանրամասնությունները հայտնի չեն:

Օգոստոսի վերջերին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հայտարարեց, որ ԱՄՆ-ը կարող է Սիրիայի վրա հարձակվել այդ երկրում քիմիական զենքի օգտագործման դեպքում:

Պարզվում է, ԱՄՆ-ը գաղտնի ուղերձով Իրանից խնդրել է Իսրայելի հարձակմանը ենթարկվելու դեպքում չհարվածել ԱՄՆ-ի մերձավորարեւելյան օբյեկտներին: Այդ մասին հաղորդում է իսրայելական «Եդիոտ Ահրոնոտ» թերթը: Ուղերձը Իրանին է փոխանցվել եվրոպական հետախուզական կառույցների օգնությամբ: Իսրայելի պաշտոնական աղբյուրները այդ ուղերձը համարում են երկկողմ հարաբերությունների ամենացածր կետ:

Ամերիկյան բանակի շտաբների պետերի միացյալ հանձնախմբի ղեկավար, գեներալ Մարտին Դեմպսին օրերս հայտարարեց, որ չի ուզում մասնակցել Իրանի միջուկային օբյեկտների վրա իսրայելցիների ծրագրած գրոհին: Նա վստահ չէ, թե Իսրայելը կարող է վերջ դնել Իրանի միջուկային մշակումներին: Դեմպսիի խոսքերով, Իսրայելի վաղաժամ գործողությունները կոչնչացնեն հակաիրանական կոալիցիան:

«Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ Բարաք Օբամայի վարչակազմը Իսրայելին հանգստացնելու նպատակով պատրաստում է հակաիրանական անչափ խիստ պատժամիջոցների փաթեթ: Իսրայելը պետք է համոզվի, որ ԱՄՆ-ը Իրանին թույլ չի տա դառնալ միջուկային տերություն եւ կստիպի վերսկսել բանակցությունները:

Պարսից ծոցում կանցկացվեն 26 երկրների ծովուժի զորավարժություններ, Քաթարում կտեղաբաշխվի ամերիկյան նորագույն ռադար. ամեն ինչ կարվի իրանական նավթի արտահանությանը վերջ դնելու համար: Թերթի տվյալներով, ԱՄՆ-ը եւ Իսրայելը մշակում են իրանական օբյեկտների դեմ ուղղված կիբեռգրոհի նոր փուլի համատեղ ռազմավարություն:

Ըստ «Նյու Յորք թայմսի», նախագահական ընտրություններից առաջ Օբամայի վարչակազմը պառակտված է: Ոմանք պահանջում են Իրանի միջուկային ծրագրի հարցը լուծել ռազմական միջամտությամբ, ուրիշներն էլ վստահ են, որ Իսրայելը փորձում է ԱՄՆ-ին ստիպել չափազանց հեռուն գնալ:

# Հակաամերիկյան ահաբեկչություն Պակիստանում



Պակիստանի հյուսիսում գտնվող Փեշավար քաղաքում երեկ առավոտյան անձնասպանական ահաբեկչության հետեւանքով սպանվել է երկու ամերիկացի: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով տեղական իշխանություններին: Եվս երկու ամերիկացի վիրավորվել է: Dawn թերթի տվյալներով, ահաբեկչի թիրախը եղել է ԱՄՆ հյուպատոսության ավտոմեքենան, որի մեջ մխրճվել է պայթուցիկով լի մեքենան:

Սպանվածների եւ վիրավորների անունները չեն հրապարակվել: Ռոյթեր գործակալության տվյալներով, ընդամենը սպանվել է 5 մարդ: Ասոշիեյթեդ պրեսը հավելում է, որ վիրավորների մեջ կան օտարերկրացիներ: Վիրավորվել է նաեւ պակիստանցի չորս ոստիկան:

Հարձակումն իրականացվել է այն ժամանակ, երբ ԱՄՆ հյուպատոսությունից դուրս եկած ավտոմեքենան անցնում էր օտարերկրյա կազմակերպությունների թաղամասերով: Օգտագործվել է մոտ 110 կգ պայթուցիկ: Դրա հետեւանքով, բացի ամերիկացի դիվանագետների զրահապատ մեքենայից, վնասվել է մի քանի այլ մեքենա, ինչպես նաեւ վեց շենք:

Փեշավարը Հայբերի նահանգի վարչական կենտրոնն է: Նահանգում բավական ազատորեն գործում են «Թալիբան» շարժման եւ «Ալ Ղաիդա» Միջազգային ահաբեկչական ցանցի գրոհայինները:

# «Անուշ» օպերան՝ 100 տարի անց կրկին Գյումրու բեմում

«Անուշ» օպերայի առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1912 թվականի օգոստոսի 4-ին, Ալեքսանդրապոլ-Գյումրու քաղաքային ժողովրդական տանը, տեղի ուժերով: Ներկայացմանը մասնակցել է երաժշտության հեղինակ Արմեն Տիգրանյանը: Եվ ահա 100 տարի անց, ի պատիվ պատմական հոբելյանի, Գյումրին բեմ հանեց մի նոր «Անուշ»:

Օգոստոսի 31-ին Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում կրկին հնչեցին ազգային անմահ օպերայի հնչյունները՝ թունդ հանելով դահլիճը ծայրեծայր լցրած հանդիսականների սրտերը: Նրանց թվում էին մայրաքաղաքից հրավիրված բազմաթիվ պատվավոր ու նաեւ բարձրաստիճան հյուրեր: Ներկայացման մեջ ընդգրկված էր ընդհանուր առմամբ 150 մարդ, ներառյալ տարբեր կատարողական խմբերը: Անուշի դերում հանդես եկավ երիտասարդ երգչուհի Արեւիկ Գրիգորյանը, Սարոյի դերում՝ Կարապետ Մանուկյանը, որի համար եւս սա առաջին օպերային բեմելն էր: Նրանց եւ մյուս դերակատարների շնորհիվ, որոնցից մեկն էլ մարմնավորել էր Մեծ լոռեցու՝ «Անուշ» պոեմի հեղինակի այստեղ ներմուծված կերպարը, հանդիսատեսը վերապրեց ծանոթ հերոսների մաքուր ու ողբերգական սիրո ամենո պատմությունը, արտիստներին ու ներկայացումը ստեղծողներին վարձահատույց լինելով շռայլ ծափերով:

Գյումրիում հոբելյանական այս բեմադրության նախաձեռնողն ու գեղարվեստական ղեկավարը ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Համլետ Կիրակոսյանն** էր: Ներկայացման բեմադրիչը վաստակավոր արտիստ **Հովհաննես Հովհաննիսյանն** էր, Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարում էր նրա գեղարվեստական ղեկավար **Երվանդ Վարոսյանը**:

Գ. Ս.

# Ինչից է սկսվում հայերեն սխալախոսությունը

Ըստ նախնական հաշվարկի՝ այս սեպտեմբերի 1-ին Շիրակի մարզում դպրոց ոտք դրեցին մոտ 3300 առաջինդասարանցիներ: Նրանց կյանքում կարեւոր այդ մուտքը եւ ավանդական դարձած Գիտելիքի օրը հատկապես քաղաքային շատ դպրոցներում նշեցին հանդիսավոր պայմաններում:

Գյումրու դպրոցներից մեկի դիմաց, փոքրիկների առաջին զանգից առաջ կազմակերպված տոնական հանդիսության ձայները, բարձրախոսով ուժեղացված, լսելի էին դեռ հեռվից: Կրթօջախի շենքի առջեւ ծանոթ տեսարան էր՝ ծնողների ձեռքը բռնած, ծաղկեփնջերով գեղեցիկ ու քիչ շփոթված մանուկների շարքեր, նրանց դիմաց կանգնած ուսուցիչներ, այստեղ՝ նաեւ հասուկ հանդիսավար եւ բարձրախոսից հնչող տոնական խոսք ու երաժշտություն:

Եվ ահա հանդիսավարը, դիմելով փոքրիկներին, ասում է մոտավորապես հետեւյալը, թե հիմա իրենք դիմավորելու են Ջյունե թագուհուն, որի հետ ինչ-որ բան պիտի անեն (թե ինչ՝ չմտապահեցի), նաեւ ծափ տան երաժշտությունը սկսվելու հետ: Եվ սկսում է. «Հիմա, ուրեմն, գիտե՞ք ում ենք դիմավորում: Հիմա դիմավորում ենք, ուրեմն, Ջյունե թագու-հուն... Գնացի՜նք»: Եվ ուզում էիր ասել՝ սպասիր, այ մարդ. երեխաներից ոմանք տարակուսած այսուայնկողմ նայեցին, թե ուր են գնալու... Մինչդեռ հանդիսավարն ընդամենը ուզում էր ասել՝ սկսեցինք: Բայց քանի որ հայերեն չէր մտածում, այդպես ասաց՝ անտեղի թյուրիմացության մեջ գցելով այդ երեխաներին եւ առաջին դասից առաջ արդեն սխալ «հայերեն» սովորեցնելով...

Հիմա այդ հանդեսի օգո՞ւտն էր շատ, թե՞ վնասը:

Գ. Ս.

# Մաշտոցը թանգարանային նմուշ չէ



- Մաշտոցը թանգարանային նմուշ չէ, այլ կենդանի գործոն է մեր մշակույթում, եւ այսօրվա ցուցահանդեսը գալիս է ապացուցելու, որ իր արտահատումն է ունենում ժամանակակից արվեստում՝ և՛ կերպարվեստի, և՛ երաժշտության հարթությունում,- այսօր լրագրողների հետ հանդիպմանն ասաց **Վահան Արծրունին**, որն այսօր՝ 17:00-ին Մաշտոց 1650 խորագիրը կրող ցուցահանդեսի բացմանը կներկայացնի «Մաշտոցի Սրբազան Մարգարիտները» շարականների շարքը:

Արվեստի խաչմերուկում կհանդիպեն՝ Աշոտ Ավագյանը «Մաշտոցն ու իր աշակերտները» գեղանկարչական ստեղծագործություններով, Վահան Արծրունին «Մաշտոցի Սրբազան Մարգարիտները» շարականների շարքի մեկնաբանությամբ, կատարող՝ Համլետ Բաղդասարյան եւ Հակոբ Հովհաննիսյանի լուսանկարչական տեսաֆիլմով:

Գեղանկարիչ Աշոտ Ավագյանն էլ իր հերթին անդրադառնալով համատեղ ծրագրին ասաց. «Տեղեկանալով, որ Վահան Արծրունին պետք է մշակի Մաշտոցի շարականները, ինձ շատ հետաքրքրեց, եւ այդ խոսակցությունից 15-20 օր հետո Մատենադարանի նոր մասնաշենքի ճարտարապետն ինձ առաջարկեց ֆրեսկաներ անել Մաշտոցի թեմայով, եւ որմնանկարները փոխվեց պաննոյի: Այժմ կոնֆերենս դահլիճը զարդարում է իմ ստեղծած պաննոները: Քանի որ արդեն էսքիզներ ունեի արված, որոշեցի շարունակել այս թեման, որի արդյունքը վաղը կտեսնեք ցուցահանդեսի ժամանակ»:

Ցուցահանդեսը տեղի կունենա Աբրահամյան արվեստի կենտրոնում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# «Լավ է մեկ անգամ աչքով տեսնես, քան 10 անգամ լսես», ասում էին սիրիահայ երեխաները

Երբ Սիրիայում վիճակը դարձավ պայթյունավտանգ, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանը** ԱՄՆ-ից զանգահարեց եւ տեղեկացրեց, որ բարեգործական ակցիա է ցանկանում կազմակերպել սիրիահայերի համար: Ինչպես «**Ազգին**» ասաց Հայերի համաշխարհային կոնգրեսի փոխնախագահ **Արամ Սարգսյանը**, սփյուռքի նախարարի հրավիրած խորհրդակցության ժամանակ այդ մասին հայտարարվել է ու որոշվել, որ ավելի ճիշտ կլինի սիրիահայ երեխաներին տեղափոխել երկշաբաթյա ճամբարային հանգստի: Այդ գործը իրականացնելու համար կոնգրեսը տրամադրում է 43 000 ԱՄՆ դոլար, եւ արտահերթ չվերթով 149 սիրիահայ երեխաներ ժամանում են Հայաստան:

Ուրբաթ օրը ՀՀԿ փոխնախագահներ Արամ Սարգսյանը եւ **Վլադիմիր Աղայանը**, միության անդամները «**Ազգ**» օրաթերթի ներկայացուցչի հետ այցելեցին Հանքավանի «Լուսաբաց» ճամբար: Հանքավանի չքնաղ բնության գրկում տեղակայված ճամբարի մուտքի մոտ հյուրերին դիմավորեց ճամբարի տնօրեն **Աշոտ Ավետիսյանը**: Հյուրերը զրուցեցին ճամբարականների հետ, ծանոթացան նրանց առօրյային: ՌՀՄ փոխնախագահ Վլադիմիր Աղայանը տեղեկացրեց, որ ՀՀԿ-ի հետ համատեղ սիրիահայ երեխաների համար կազմակերպելու են համերգ: Այդ անակնկալը ոգեւորեց երեխաներին, եւ նրանք ծափողջույններով դիմավորեցին Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի Գառզուի անվան արվեստի դպրոցի (տնօրեն՝ Տաթյանա Սաղաթելյան) սաներին: Քիչ անց ելույթ ունեցան արվեստի դպրոցի չորս պարախմբերը, ժողովրդական, էստրադային խմբերը, անհատ կատարողները, որոնց էլ միանալով ճամբարականները շրջան կազմեցին, ու հայկական քոչարին թնդաց սարերն ի վեր:



Քիչ անց ճամբարի հրաշալի միջոցառմանը միացավ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**: Նախարարը ողջունեց սիրիահայ երեխաներին, մաղթեց, որ միշտ հիշեն իրենց հայրենիքում անցկացրած օրերը ու եթե կորոշեն՝ վերադառնան հայրենի օրրան: Այնուհետեւ Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց Արա Աբրահամյանին, Արամ Սարգսյանին, Վլադիմիր Աղայանին՝ սիրիահայ երեխաներին տոնական գեղեցիկ օր ու մայր հայրենիք նրանց այցը կազմակերպելու համար:

Անմոռանալի այդ մի քանի ժամերը երբեք չեն ջնջվի երեխաների հիշողությունից, որոնք եռագույնը ձեռքերին զիլ ձայնով երգում էին, պարում ու անուր դոփում, որ իրենց ձայնը տարածվի ու հասնի իրենց ծնողներին: Բոլոր նրանք, ում հետ «**Ազգը**» զրուցեց, հուզված իրենց շնորհակալությունն էին հայտնում նման հրաշալի երկշաբաթյա հանգիստ ու անմոռանալի ժամեր պարգեւելու համար: «Մենք սիրեցինք մեր հայրենիքը եւ այլեւս նրանից չենք բաժանվի: Եթե ոչ հիմա, ապա մոտ ժամանակներս կգանք Հայաստան, մեր հիմնական տունը՝ մեր վերջավորությունն այս հողում է...», ասում էին **Սոսեն**, **Անդրանիկը**, **Սաքենը**, **Արմանը**, **Լեւոնը**, **Մարիամը**...

Սիրիահայերը սեպտեմբերի 4-ին կմեկնեն Հայաստանից՝ կրկին վերադառնալու ակնկալիքով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Հանքավան-Երեւան

# Նկարիչների միությունում բացվեց ցուցահանդես՝ նվիրված 1812 թ. պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի 200-ամյակին

Սեպտեմբերի 3-ին, երեկ, Հայաստանի նկարիչների միությունում բացվեց ցուցահանդես, որը նվիրված է 1812 թ. պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի 200-ամյակին: Ցուցահանդեսի կազմակերպիչներն են՝ Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո» ներկայացուցչության ղեկավար Վիկտոր Կրիվոպուսկովն ու ռուսական գիտության եւ մշակույթի կենտրոնի մշակութային ծրագրերի համակարգող Էմմա Բուդաղյանը:

Ցուցահանդեսը բաղկացած է 2 բաժնից՝ռուսական ու ֆրանսիական:

Բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ «Ռոսսոտրուդնիչեստվո» կառույցի ղեկավարի առաջին տեղակալ, Ռուսաստանի Դաշնության դեսպանատան առաջին քարտուղար **Մարկ Կալինինը**, որ խոսեց դարակազմիկ այդ հաղթանակի մասին, ինչպես նաեւ կարեւորեց Ռուսաստանում անցկացվելիք միջոցառումների մասին: Այնուհետեւ ցուցահանդեսի կազմակերպման նպատակի ու նշանակության մասին խոսեց ռուսական գիտության եւ մշակույթի կենտրոնի մշակութային ծրագրերի համակարգող Էմմա Բուդաղյանը:

Ներկա էին ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչներ:

Նշենք, որ Ռուսաստանում այս օրերին մեծ շուքով է նշվում այս օրը՝ անցկացվում են տարբեր միջոցառումներ՝ բացվում ցուցահանդեսներ օրվա խորագրով, նույնիսկ վերջերս Մոսկվայի Կարմիր հրապարակում անցկացվեց մեծ հաղթական ռազմաշքերթ:

Հատկանշական է այն փաստը, որ այդ պատերազմում երկու կողմերում մարտնչել են հայազգի զինվորականներ եւ կամավորներ: Աչքի են ընկել գեներալներ Վ. Մադաթովը, Դ. Դելյանովը (հուսարական գնդի հրամանատար), Դ. Ախշարումովը, Պ. Մելիքյանցը (ռոտմիստր-կապիտան): Բորոդինոյի ճակատամարտում սպանվել է գվարդիայի կապիտան Պ. Շախնավազյանը (Երեւանից), Ա. Լազարեւը զոհվել է Լայպցիգի ճակատամարտում: Ռազմական գործողություններին մասնակցել են նաեւ Աբամելիք եղբայրները, Հայրապետովը, Մանվելովը, Մելիք-Օսիպովը, Լալաեւը, Բեհբութովը, Վարժապետյանը, Աղամբարովը, Թումանովը, Սումբատովը եւ ուրիշներ: Ռուսաստանի եւ Կովկասի շատ քաղաքների հայ բնակիչներ նյութական օժանդակություն են ցույց տվել պատերազմից տուժածներին. Աստրախանի հայերը 1812-ին հավաքել են 100000 ռուբլի, Նախիջեւանցիները՝ ավելի քան 300000 ռուբլի, նվիրատվություններ են արել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Ղզլարի, Մոզդոկի, Գրիգորիուպոլսի, Թիֆլիսի հայերը՝ Ռուսաստանի կողմից, ինչպես նաեւ Ֆրանսիայի Մարշալ Իոախիմ Մյուրատը Ռուստամ Մամլուկը՝ Ֆրանսիայից:

Մեծ թվով հայեր արժանացել են զինվորական պարգեւների, պարգեւատրվել «1812 թ. համար» մեդալով:

Ցուցահանդեսը տեւելու է մինչեւ սեպտեմբերի 11-ը:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Վերջին 2 մեդալները մեր հավաքականին պարգեւեցին Սիմոն Մարտիրոսյանն (94 կգ) ու Միշա Վարդանյանը (94 կգ-ից բարձր), որոնք երկամարտում արժանացան բրոնզե մեդալների:

Մինչեւ 94 կգ քաշային կարգում Սիմոն Մարտիրոսյանը վստահ հանդես եկավ: Պոկում վարժությունում նա 3 փորձերն էլ հաջող կատարեց՝ հաջորդաբար բարձրացնելով 140, 145 եւ 148 կգ ու արժանացավ բրոնզե մեդալի: Այս վարժությունում լավագույնը մոլդովացի Մարկել Գուիդեան էր, որը հաղթող ճանաչվեց 157 կգ արդյունքով: 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի Նիկիտա Սոլովյովը՝ 150 կգ:

Հրում վարժությունում էլ Մարտիրոսյանը 173 կգ արդյունքով արժանացավ բրոնզե պարգեւի, ինչը երկամարտի 321 կգ (148+173)



Սիմոն Մարտիրոսյան

# Հայ պատանի ծանրորդներն ուժեղագույնն են Եվրոպայում

***Բուխարեստում վերջնագիծը հատեց ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունը, որում գերազանց հանդես եկան հայ ծանրորդները: Առաջնությանը մասնակցած մեր 9 ծանրորդներից 7-ը դարձան մրցանակակիրներ: Էդուարդ Կիզողյանի գլխավորած Հայաստանի պատանեկան հավաքականն ուժեղագույնը ճանաչվեց Եվրոպայում՝ երկամարտում նվաճելով 3 ոսկե, 2-ական արծաթե եւ բրոնզե մեդալ: 2-րդը ՌԴ հավաքականն էր՝ 2 ոսկե, 4 արծաթե, 2 բրոնզե մեդալ: Լավագույն հնգյակում են նաեւ Ուկրաինան (2+2+1), Բելառուսը (1+2+2) եւ Թուրքիան (1+2+1): Ադրբեջանը նվաճեց մեկական ոսկե եւ բրոնզե մեդալ: Եթե հաշվի առնենք նաեւ առանձին վարժություններում նվաճած մեդալները, ապա մեր ծանրորդների ավարը շատ հարուստ է. 10 ոսկե, 3 արծաթե, 6 բրոնզե մեդալ: Բացի այդ, մեր ծանրորդները սահմանեցին աշխարհի 2 եւ Եվրոպայի 3 պատանեկան ռեկորդ:***



Միշա Վարդանյան

94 կգ-ից բարձր քաշ ունեցող ծանրորդների մրցավեճում Միշա Վարդանյանը երկամարտի 333 կգ (145+188) արդյունքով արժանացավ բրոնզե մեդալի: Նա մեկ բրոնզե մեդալ էլ նվաճեց հրում վարժությունում՝ ցույց տալով 188 կգ: Միշան 2 անգամ փորձեց իրեն ենթարկել 200 կգ-անոց ծանրաձողը, սակայն չստացվեց: Հակառակ դեպքում նա հրում վարժությունում արծաթե մեդալ կնվաճեր: Միշան թույլ հանդես եկավ պոկում վարժությունում, որտեղ 145 կգ արդյունքով գրավեց 5-րդ տեղը:

Եվրոպայի պատանեկան առաջնությունը ցույց տվեց, որ հայկական ծանրամարտում հիանալի հերթափոխ է աճում: Մեր պատանի ծանրորդներին այժմ նոր փորձություն է սպասում Սլովակիայի Կոշիցե քաղաքում, որտեղ սեպտեմբերի 16-ին կմեկնարկի ծանրամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը:

արդյունք ապահովեց: 15-ամյա հայ պատանին երկամարտում էլ բրոնզե մեդալ նվաճեց: Մոլդովացի Մարկել Գուիդեան Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց երկամարտի 347 կգ (157+190) արդյունքով: Նիկիտա Սոլովյովն էլ 335 կգ (150+185) արդյունքով դարձավ արծաթե մրցանակակիր:

# Առաջատարները միավորներ են կորցնում

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 21-րդ տուրն աչքի ընկավ ոչ-ոքիների առատությամբ: Միակ հաղթանակը գրանցվեց «Փյունիկի» օգտին, որը 2-0 հաշվով պարտության մատնեց «Արարատին»: Վերջինս հերթական անգամ հաջող խաղալով առաջին խաղակեսում ու դարպասն անառիկ պահելով, ընդմիջումից հետո կրկին գոլեր բաց թողեց եւ պարտվեց: «Փյունիկից» աչքի ընկան Վիուլեն Այվազյանն ու Դավիթ Մինասյանը:

Առաջնության միանձնյա առաջատար «Միկան» սեփական հարկի տակ չկարողացավ հաղթել «Գանձասարին»: Գրանցվեց գոլազուրկ ոչ-ոքի: Վնասվածքից ապաքինվելուց հետո «Միկայի» դարպասի պաշտպանությունը կրկին վստահվել էր Գեւորգ Կասպարովին: Նա պաշտոնական մրցումներում 100-րդ անգամ դարպասն անառիկ պահեց ու ընդգրկվեց Սերգեյ Զասիկյանի անվան դարպասապահների խորհրդանշական ակումբում՝ դառնալով 4-րդ անդամը: Մինչ այդ ակումբի անդամների ցանկում միայն 3 հոգի էին՝ Հարություն Աբրահամյանը, Ռայմոնդ Զադուրյանն ու Արթուր Հովհաննիսյանը:

Գյումրիի «Շիրակն» էլ այս տուրում 2 թանկարժեք միավոր կորցրեց՝ սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) խաղալով «Իմպուլսի» հետ: Առաջին խաղակեսում շիրակցի Հրայր Մկոյանը տուգանային հարվածով գրավեց դարպասը: 2-րդ խաղակեսում Արթուր Բարսեղյանը վերականգնեց հավասարակշռությունը:

Հաղթանակին մոտ էր «Բանանցը», որն արդեն 8 խաղ չի վայելել 3 միավոր վաստակելու բերկրանքը: «Ուլիսի» հետ մրցավեճում մինչեւ 75-րդ րոպեն «Բանանցը» Լեւոն Անանյանի եւ Արտակ Դաշյանի խփած գոլերի շնորհիվ հաղթում էր 2-0 հաշվով: Սակայն դա բավարար չէր խաղի ելքը վճռելու համար: Ընդամենը 3 րոպեում այդ առավելությունն ի չիք դարձավ: Նախ Դավիթ Գրիգորյանը կրճատեց հաշիվը, ապա Պատոն վերականգնեց հավասարակշռությունը՝ 2-2:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 21 | 15 | 3 | 3 | 35-19 | 48 |
| 2. Շիրակ | 20 | 13 | 4 | 3 | 34-18 | 43 |
| 3. Իմպուլս | 21 | 11 | 3 | 7 | 35-30 | 36 |
| 4. Գանձասար | 20 | 8 | 6 | 6 | 23-16 | 30 |
| 5. Փյունիկ | 20 | 9 | 3 | 8 | 38-27 | 30 |
| 6. Ուլիս | 21 | 5 | 5 | 11 | 25-32 | 20 |
| 7. Բանանց | 20 | 3 | 6 | 11 | 21-34 | 15 |
| 8. Արարատ | 21 | 2 | 2 | 17 | 12-47 | 8 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 11 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 10 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 9 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 8 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 8 |
| Կամո Հովհաննիսյան | «Փյունիկ» | 8 |

ՇԱԽՄԱՏ

# Սկզբունքային մրցախաղեր

Շախմատի համաշխարհային օլիմպիադայի հերթական 2 տուրերում Հայաստանի տղամարդկանց հավաքականը շատ կարեւոր ու սկզբունքային մրցախաղեր անցկացրեց չեմպիոնի տիտղոսի գլխավոր հավակնորդների թվին դասվող Ուկրաինայի եւ Ռուսաստանի շախմատիստների հետ:

Ուկրաինացիների հետ 5-րդ տուրի մրցավեճի ելքը վճռեց Լեւոն Արոնյանը, որն առաջին խաղատախտակի վրա պարտության մատնեց Վասիլի Իվանչուկին: Մեր մյուս շախմատիստները պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Սերգեյ Մովսիսյանն ու Ռուսլան Պոնոմարյովը, Վլադիմիր Հակոբյանն ու Անդրեյ Վոլոկիտինը, Գաբրիել Սարգսյանն ու Պավել Էլյանովը:

Այդ հաղթանակից հետո Հայաստանի հավաքականը վաստակեց 10 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով գերազանցելով նույնքան արդյունք ունեցող ռուսներին, գլխավորեց մրցաշարային աղյուսակը: 9-ական միավորով առաջատարներին հետապնդում էին Ադրբեջանի եւ Խորվաթիայի հավաքականները: Ռուսները 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին հունգարացիներին, նույնքան արդյունքով խորվաթները հաղթեցին ֆրանսիացիներին, ադրբեջանցիներն էլ առավելության հասան կանադացիների նկատմամբ 3,5-0,5 :

Երեկ ռուսների հետ մրցավեճում գրանցվեց ոչ-ոքի: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում 2 թիմերի առաջատարներ Լեւոն Արոնյանի եւ Վլադիմիր Կրամնիկի հանդիպումը, որն ավարտվեց ռուս գրոսմայստերի հաղթանակով: Արոնյանն օլիմպիադայում առաջին պարտությունը կրեց: 2-րդ խաղատախտակի վրա Սերգեյ Մովսիսյանը պարտության մատնեց Ալեքսանդր Գրիշչուկին: Կարյակին-Հակոբյան, Սարգսյան-Յակովենկո պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Առաջատարների միջեւ գրանցված ոչ-ոքին հնարավորություն տվեց ադրբեջանցիներին 11 միավորով հավասարվելու Հայաստանին ու Ռուսաստանին: Նրանք 3:1 հաշվով հաղթեցին խորվաթներին:

Կանանց մրցապայքարում Հայաստանի հավաքականի համար 5-րդ եւ 6-րդ տուրերը հաղթական էին: 5-րդ տուրում մեր ընտրանին 2,5-1,5 հաշվով պարտության մատնեց Անգլիայի հավաքականին: Մեր թիմից հաղթեցին Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը՝ պարտության մատնելով Անիա Կորկեին եւ Սարահ Հեգարտիին: Մարիա Կուրսովան հաշտություն կնքեց Սաբրինա Չեւաննեսի հետ: Իսկ Աննա Հայրապետյանը պարտվեց Կանվալ Բաթիային:

Հաջորդ մրցախաղում մեր շախմատիստուհիները 3,5:0,5 հաշվով առավելության հասան արգենտինացիների նկատմամբ: Միակ կես միավորը մրցակցին զիջեց Էլինա Դանիելյանը՝ հաշտություն կնքելով Կարոլինա Լուջանի հետ: Վերջապես հաջող խաղաց Լիլիթ Գալոյանը, որը 3 անընդմեջ պարտություններից հետո հաղթեց Մարիա Ֆեռնանդեսին: Լիլիթ Մկրտչյանը պարտության մատնեց Մարիա Պլազաոլային, Մարիա Կուրսովան էլ հաղթեց Էլեն Մարտինեսին:

6 տուրից հետո ՀՀ հավաքականը վաստակել է 8 միավոր: 11-ական միավորով առաջատարներն են ռուսներն ու լեհերը: Ռուսները ոչ-ոքի խաղացին Չինաստանի հետ, որը վաստակեց 10 միավոր, իսկ լեհերը 3,5:0,5 հաշվով հաղթեցին սերբերին:

# Պատանեկան հավաքականը միջին դիրքերում է

Ի տարբերություն մեծահասակների, Հայաստանի շախմատի պատանեկան հավաքականն այնքան էլ հաջող հանդես չի գալիս Ստամբուլում ընթացող մինչեւ 16 տարեկանների համաշխարհային օլիմպիադայում: Մեր հավաքականը 7 տուրից հետո 17 միավորով ընթանում է 7-րդ տեղում: Առաջատարն Իրանի հավաքականն է, որն ունի 21 միավոր: 2-րդ տեղում 20,5 միավորով ռուսներն են: Լավագույն եռյակը եզրափակում է Ադրբեջանը՝ 18,5 միավոր:

4-րդ տուրում մեր պատանիները սկզբունքային մրցավեճում 3-1 հաշվով հաղթեցին ադրբեջանցիներին: Տիգրան Հարությունյանը, Նորայր Թորոսյանն ու Վլադիմիր Կանջարյանը հաղթեցին մրցակիցներին: Միակ պարտությունը կրեց Մանուել Պետրոսյանը:

5-րդ տուրում ոչ-ոքի խաղալով սերբերի հետ, մեր պատանիները հաջորդ տուրում անսպասելիորեն 0-4 հաշվով զիջեցին Իրանի հավաքականին, իսկ 7-րդ մրցախաղում նույնքան հաշվով ջախջախեցին Հարավաֆրիկյան Հանրապետության թիմին:

# Ռոբերտ Հովհաննիսյանը ձախողվեց վերջնագծում

Սանկտ Պետերբուրգում ավարտված Միխայիլ Բոտվիննիկի հուշամրցաշարում հայ շախմատիստներին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Հայաստանի 6 ներկայացուցիչներից առավել հաջող հանդես եկան Ավետիք Գրիգորյանն ու Զավեն Անդրեասյանը, որոնք 9 հնարավորից վաստակեցին 6,5 միավոր եւ զբաղեցրին համապատասխանաբար 18-րդ ու 20-րդ տեղերը:

Զավենը շատ տպավորիչ ելույթներ ունեցավ հատկապես վերջնագծում՝ տոնելով 3 անընդմեջ հաղթանակ Անատոլի Դոնսկոյի, Իգոր Մալախովի եւ Իլյա Իլյուշենոկի նկատմամբ: Ավետիք Գրիգորյանը հաղթեց Մաքսիմ Լավրովին ու Իվան Ռոզումին, ոչ-ոքի խաղաց Անդրեյ Բելոզերովի հետ:

Իսկ ահա առաջատարների խմբում գտնվող Ռոբերտ Հովհաննիսյանը վերջնագծում ձախողվեց: 7-րդ տուրում նա պարտվեց Իվան Բուկավշինին, ապա հաղթեց Վլադիմիր Ֆեդոսեեւին: Սակայն ավարտական տուրում կրկին անհաջող խաղաց՝ զիջելով Բորիս Խարչենկոյին: Ռոբերտը 6 միավորով գրավեց 24-րդ տեղը:

5-ական միավորով Վահե Բաղդասարյանն ու Վլադիմիր Պողոսյանը զբաղեցրին համապատասխանաբար 70-րդ եւ 93-րդ տեղերը: Իսկ Համազասպ Վարդանյանը 3,5 միավորով 162-րդն էր:

Միխայիլ Բոտվիննիկի հուշամրցաշարի հաղթողին որոշելու համար հարկ եղավ դիմելու լրացուցիչ գործակիցների օգնությանը, քանի որ 8 շախմատիստներ վաստակել էին հավասար՝ 7-ական միավոր: Հաղթող ճանաչվեց ուկրաինացի Ալեքսանդր Արեշչենկոն, 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին ռուսաստանցիներ Վալերի Պոպովն ու Վադիմ Զվյագինցեւը:

# Օզբիլիսի հաղթական գոլը

ՌԴ առաջնության հերթական տուրում Կրասնոդարի «Կուբանը» հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեց Մոսկվայի «Դինամոյին»: «Կուբանին» հաղթանակ պարգեւեց ավելացված ժամանակում Արաս Օզբիլիսի խփած գնդակը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Հայ հաքերները գրոհել են ադրբեջանական կայքերը

Ունենալով հանդերձ Արցախի ազատագրված տարածքները, Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միացյալ քարտեզում անհրաժեշտ է ընդգրկել դրանք:

Տեղեկատվության անվտանգության մասնագետ **Տիգրան Քոչարյանը** կարծում է՝ եթե տարածում ենք կիսատ քարտեզներ՝ առանց ազատագրված տարածքների, դա ինչ-որ առումով նսեմացնում է մեր հաղթանակը, մինչդեռ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը երկուսն էլ հայկական պետություններ են, հետեւաբար հայկական են եւ ազատագրված տարածքները: Եթե չենք ներառում դրանք, Հայաստանից ու Լեռնային Ղարաբաղից դուրս ապրողների մեջ կասկածանք է առաջանում, հատկապես զբոսաշրջիկների մեջ՝ ո՞ր հանրապետությանն են պատկանում դրանք:



Երեկ՝ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միացյալ քարտեզի օրը, Տիգրան Քոչարյանը կոչ արեց բոլոր նրանց, ովքեր կիրառում են 2 հանրապետությունների քարտեզները, տարածել միացյալ քարտեզը՝ ազատագրված տարածքներով, ինչը նաեւ կլինի կարեւոր գործոն Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ տեղեկատվական պատերազմում:

Տիգրան Քոչարյանի հորդորն ուղղված է ե՛ւ նախարարություններին, ե՛ւ առհասարակ պետական մարմիններին: Ըստ նրա՝ մի քանի նախարարություններ արդեն կիրառում են միացյալ քարտեզը, օրինակ՝ գյուղատնտեսության նախարարությունը, կրթության ու գիտության նախարարությունը, որը միացյալ քարտեզն արդեն հրատարակել է դասագրքերում: Քարտեզը նաեւ կա վաճառքում, ընդգրկվել է մի քանի օր առաջ տպագրված ազգային ատլասի մեջ:

Մասնագետն ասում է՝ միացյալ քարտեզի առնչությամբ ադրբեջանցիները բողոք են բարձրացրել: Օրինակ՝ եթե քարտեզը հայտնվում է զբոսաշրջային որեւէ գործակալության կայքում, ադրբեջանցիները բողոքում են, թե տվյալ գործակալությունը սխալ քարտեզ է տեղադրել, սակայն այդպես հասնում են հակառակ արդյունավետությանը. արդեն հետաքրքրությունից ավելանում է կայքի այցելուների թիվն ու բարձրանում գործակալության հեղինակությունը:

Ըստ Տիգրան Քոչարյանի՝ եթե միացյալ քարտեզը Հայաստանից դուրս տարածելու հարցում կան դիվանագիտական նրբություններ, ապա մեր ներսում կարող ենք տարածել ազատորեն:

Տիգրան Քոչարյանը նաեւ խոսեց տեղեկատվական անվտանգությունից, որը Հայաստանում, նրա կարծիքով, բավականին ուժեղ է, բայց նկատի ունենանք, որ առաջիկայում Ադրբեջանից հայկական կայքերի վրա հակագրոհ է սպասվում, քանի որ նախորդ երկու օրերին հայ հաքերները գրոհել են ադրբեջանական կայքերի վրա ու հայերի կոտրած բազմաթիվ կայքերից են եղել նաեւ Ադրբեջանի նախագահի ու նրա կնոջ կայքերը: «Երկրի առաջին դեմքի կայքը կոտրելը նրանց համար մեծ վիրավորանք է», ասում է Տիգրան Քոչարյանը, որի կարծիքով այդպիսի վիրավորանքից հետո պետք է սպասել հակագրոհի, հետեւաբար հիմա պետք է բարձրացնել կայքերի անվտանգությունը՝ սկսած լրատվամիջոցների կայքերից՝ վերջացրած ֆեյսբուքի էջերով:

Տեղեկատվության անվտանգության մասնագետը նախ խորհուրդ է տալիս սեփական էջով (account) չմտնել ադրբեջանական խմբերն ու բաժինները, լավ կլինի մտնել ու գրառումները թողնել կեղծ անվան տակ ու այնպես անել, որ ֆեյսբուքով էջը գտնել հնարավոր չլինի:

Տիգրան Քոչարյանը նաեւ հորդորեց սոցիալական ցանցերի օգտատերերին ու լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ չտարածել Ռամիլ Սաֆարովի լուսանկարները. «Քանի որ համացանցում որոնում ենք Գուրգեն Մարգարյան, սակայն ցույց է տալիս Ռամիլ Սաֆարովի նկարները»: Սոցցանցերի օգտատերերը նաեւ կարող են ժամանակավոր սառեցնել իրենց էջերը՝ պաշտպանվելու համար ադրբեջանցի հաքերներից:

Ի. Պ.

ՀԱԿԱԶԴԵՑԻԿ

# ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան կասեցնում է իր փոխհարաբերությունները Հունգարիայի գիտությունների ակադեմիայի հետ

**Հունգարիայի իշխանությունների կողմից Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանին վերադարձնելու փաստի առթիվ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան ուղերձ է հղել Հունգարիայի գիտությունների ակադեմիային եւ Հունգարիայի գիտական հանրությանը: Ուղերձում ասված է. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի եւ Հունգարիայի գիտությունների ակադեմիայի միջեւ ավելի քան կեսդարյա արդյունավետ ու խոստումնալից համագործակցություն է ձեւավորվել գիտության տարբեր բնագավառներում: Չնայած ապագային միտված հեռանկարային պայմանավորվածություններին՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ելնելով Հունգարիայի արդի կառավարության կողմից ստեղծված աննախադեպ եւ հումանիզմի բոլոր արժեքները ոտնահարող գործողություններից, ստիպված կասեցնում է իր փոխհարաբերությունները Հունգարիայի գիտությունների ակադեմիայի հետ:**

**Եվրոպական միության եւ ՆԱՏՕ-ի անդամ Հունգարիայի իշխանությունների՝ Ադրբեջանի իշխանությունների հետ կնքած խայտառակ, անպատիվ ու անհանդուրժելի գործարքը ցնցել ու խորապես վրդովել է գիտության հայ մշակներին՝ դրդելով ապաքաղաքական համարվող գիտնականներին ծայրահեղ ու աննախադեպ նմանօրինակ քայլի:**

**Հուսով ենք, որ ծանրակշիռ Ձեր ձայնը լսելի կդարձնեք Ձեր իշխանություններին, կդատապարտեք ու կպարսավեք նրանց անբարո եւ հունգար ժողովրդի համար անպատվաբեր գործարքը:**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

# «Արմավիան» դադարեցրել է թռիչքը Հալեպ

**Սիրիական մամուլում լուրեր կան, թե «Ազատ բանակի» ղեկավարները սպառնալիքներ են ստացել այսօրվանից ռմբակոծելու Հալեպի ու Դամասկոսի օդային տարածք հասնող ինքնաթիռները: «Արմավիան» երեկվանից դադարեցրել է Երեւան-Հալեպ թռիչքները՝ այս սպառնալիքները նկատի ունենալով: Սակայն որեւէ պաշտոնական հաստատում այդպիսի սպառնալիքների վերաբերյալ դեռ չկա՝ Հայաստանի ԱԳՆ մամուլի խոսնակ Տիգրան Բալայանի խոսքով՝ այդպիսի լուրերի իսկությունը ստուգելը դժվար է, եւ ստուգելուց հետո միայն կարելի կլինի անելիքը ճշտել:**

Մ. Խ.

# Դատախազությունը Հունգարիայից հետ է կանչել իր աշխատակիցներին

**Ըստ Հայաստանի գլխավոր դատախազության մամուլի խոսնակ Սոնա Տրուզյանի՝ Հայաստանի գլխավոր դատախազությունը հետ է կանչել դատախազության այն աշխատակիցներին, ովքեր վերապատրաստման դասընթացներ են անցնում Բուդապեշտում: 3 աշխատակից Բուդապեշտ էր մեկնել օգոստոսի 18-ին՝ Միջազգային իրավական ակադեմիայի ծրագրին մասնակցելու, իսկ դասընթացը պետք ձգվեր մինչեւ հոկտեմբերի 11-ը: Այսօր նրանք կվերադառնան Հայաստան: Վերջին դեպքից հետո, երբ Հունգարիան մարդասպանին արտահանձնեց Ադրբեջանին, ՀՀ դատախազությունն անհնարին է համարում իր աշխատակիցների մասնակցությունը Բուդապեշտում կազմակերպվող դասընթացներին: Իր այս մտադրության մասին ՀՀ գլխավոր դատախազը երեկ գրավոր ուղերձ է հղել Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնին (ծրագրի իրականացումը ֆինանսավորվում էր ԱՄՆ կառավարությունը):**

Մ. Խ.

# Բողոքի նամակ՝ Իսրայելում Հունգարիայի դեսպանին

**Իսրայելում Հունգարիայի Հանրապետության դեսպան պարոն Զոլտան Զանեցգերոգի.**

**Ներո՛ղ եղեք, ես դիվանագետ չեմ, ուստի իրերը պիտի կոչեմ իրենց անուններով:**

**Ես եւ տիկինս եղել ենք Ձեր հիասքանչ երկրում (1986, Հայաստանից) մեր գործընկերների հրավերով եւ վայելել նրա բարի, ժպտադեմ ու սիրալիր ժողովրդի անչափ հարգալից հյուրասիրությունը, շրջագայել ողջ երկրով մեկ, դիտել նրա պատմական, տեսարժան վայրերը, խմել Տոկայի հոյակապ գինին, որը դեռ մեծ Վոլտերն էր գնահատել, անվանելով այն «Տոկայի յանտար», մասնակցել մի շարք ժողովրդական եւ պետական տոնախմբություն-միջոցառումներին, մասնավորապես օգոստոսի 20- ի պետական գլխավոր տոնին՝ «Սուրբ Իշտվանի օրը» նվիրված Հունգարիայի առաջին թագավոր Իշտվանի թագադրությանը, որի շնորհիվ քրիստոնեությունը մուտք գործեց երկիր...Այո, քրիստոնեությունը մուտք գործեց Հունգարիա ...**

**Պարո՛ն դեսպան. Քրիստոնեական ո՞ր սկզբունքի վրա հիմնվելով Ձեր երկրի իշխանությունները Ադրբեջանին հանձնեցին հանցագործ մարդասպան Ռամիլ Սաֆարովին, դրանով իսկ դե ֆակտո ներելով նրա կողմից հայ սպա Գուրգեն Մարգարյանին կացնահար անելը, այն էլ հայ սպայի քնած ժամանակ, լոկ այն պատճառով, որ Գուրգենը հայ էր: Նա ժամանել էր ներկայացնելու Հայաստանը Ձեր երկրում, «ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում» կազմակերպված լեզվի ուսուցման դասընթացներին:**

**Արդյո՞ք Հունգարիան անարգանք չզգաց իր հանդեպ, երբ հյուրի կարգավիճակով օտարերկրացին անարգում է հյուրընկալող երկրի օրենքները, մարդ է սպանում: Պարո՛ն դեսպան, իսկ գուցե ադրբեջանցու արարքը շարունակությո՞ւնն է 1526 թվի Մոհաչյան պատերազմի, որից հետո թուրք բարբարոսները սրի քաշեցին ոչ միայն հունգարներին այլեւ չեխերին ու խորվաթներին: Վստահ եմ, Ձեր երկրի պատմությանը, նամանավանդ ողբերգական էջերին, Դուք ավելի եք քաջատեղյակ: Եվ այսօ՞ր...,**

**... Ես վստահ եմ, որ շուտով Հունգարիայի իշխանավորների տնական սեղաններին Տոկայի գինու փոխարեն կդրվի ադրբեջանական նավթը, որը միայն Հունգարիայի դեմքում չէ, որ օգտագործվում է իբրեւ սառը զենք, բայց, գայթակղիչ...**

**Շնորհավորո՛ւմ եմ:**

ՆՈՒԲԱՐ ԱՄԼԱՆՅԱՆ
Հայաստանի եւ Իսրայելի կոմպոզիտորների միության անդամ
Հայֆա, Իսրայել

*Նամակի անգլերեն տարբերակը ուղարկված է հասցեատիրոջը:*

# Հուժկու ցույց ի պաշտպանություն նախագահ Ասադի

Սիրիացի այսպես կոչված փախստականների ճամբարները տեղակայված են Թուրքիայի Հաթայի նահանգում, որը սահմանակից է Սիրիային: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ հենց այստեղ է գտնվում «Ազատ Սիրիայի բանակի» շտաբ-կայանը:

Խոսքը «Ափայդըն» ճամբարի մասին է, որտեղ տեղակայված զինվորի համազգեստ կրող ահաբեկիչներն ու գրոհայինները սպառնում էին նահանգի բնակիչներին, մասնավորապես արաբ ու ալավի:

«**Ազգը**» վերջերս անդրադարձել էր դրան: Թուրքական մամուլն էլ սեպտեմբերի 1-ին անդրադարձել է Անթաքիայում «Ո՛չ Սիրիայում իմպերիալիստական միջամտությանը» պլատֆորմի «Սիրիացի ժողովուրդը միայնակ չէ», «Սիրիայում պատերազմ չենք ուզում», «Ֆաշիզմի դեմ ուս-ուսի», «Մեր կյանքը կտանք հանուն Ասադի» կարգախոսներով կազմակերպված երթին:

Դա արտոնված չի եղել: Ցուցարարները հավաքվել են Հաթայի նահանգապետարանի մերձակայքում, երթով հասել են Անթաքիայի կենտրոնական հրապարակ եւ դատապարտել Սիրիայի նկատմամբ վարչապետ Էրդողանի որդեգրած քաղաքականությունը:

Հ. Չ.

# Թուրք-քրդական բախումներ. 30 սպանված

Թուրքիայի հարավ-արեւելքում՝ սիրիական եւ իրանական սահմանների մոտակայքում թուրք զինվորականների եւ PKK-ի քուրդ գրոհայինների բախումների ընթացքում 30 մարդ է սպանվել, որոնցից 21-ը քրդեր են, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Քրդերի հակագրոհի հետեւանքով սպանվել են 9 եւ վիրավորվել 8 թուրք զինվոր ու ոստիկան: Բախումները կիրակի երեկոյան տեղի են ունեցել չորս տարբեր վայրերում:

Ավելի վաղ՝ օգոստոսի 31-ին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել էր, թե Թուրքիայում քրդական խնդիր այլեւս գոյություն չունի, քանի որ իշխանությունները լուծել են այն, հաղորդում է Անատոլիա գործակալությունը:

Թուրքական իշխանությունների եւ PKK-ի գրեթե երեսնամյա դիմակայության ընթացքում ավելի քան 40 հազար մարդ է սպանվել: Գրոհայիններն ուզում են քրդական պետություն ստեղծել Թուրքիայի հարավ-արեւելքում:

Երեւանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսան իր հարթակում իրականացնում է «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված օգտագործված տարբեր տեսակի մալուխներ պարունակող գծամալուխային կայանների (ԳՄԿ), ինչպես նաեւ այլ սարքավորումների, սարքերի, դետալների եւ բազմաթիվ ապրանքանյութական արժեքների աճուրդային վաճառք:
Գույքի ամբողջական ցանկին ծանոթանալու, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010) 56-52-28 կամ այցելել ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, կամ բորսայի կայք՝ www.borsa.am:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 3.9.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: